

Մարկոս Էլիոս Ավրելիոս Վերոս

ԻՆՔՍ ԻՆՁ ՀԵՏ ՄԵՆԱԿ

Խորհրդածություններ (հատվածներ)



Ռուսերենից թարգմանությունը՝ Աշոտ Տիգրանյանի

Բովանդակություն

[Առաջին գիրք](#)

[Երկրորդ գիրք](#)

[Երրորդ գիրք](#)

[Չորրորդ գիրք](#)

[Հինգերորդ գիրք](#)

[Վեցերորդ գիրք](#)

[Յոթերորդ գիրք](#)

Առաջին գիրք

5. Դաստիարակիցս (Ժառանգել եմ)... անքմահաճություն, դիմացկունություն դժվարությունների ժամանակ, սին գործերով չզբաղվելը և գործեր կատարելիս ինքնուրույնության ձգտում, զրպարտության անընկալունակություն:

6. Դիզգնետից՝ անմտությունների նկատմամբ անտարբերություն, անվստահություն հմայախոսքերի, դեերի վտարման և նմանատիպ բաների մասին հրաշագործների և կախարդների բարբաջանքների նկատմամբ: Ինչպես նաև այն, որ չեմ տարվել հիմարություններով, այլ տրվել եմ իմաստասիրությանը: Արդեն մանկական տարիներից գրել եմ երկխոսություններ և սիրել համեստ մահիճը, գազանի մորթին և հելենական ապրելակերպի մյուս պատկանելիքները:

7. Ռուստիկոսից՝ իմ բնավորությունը վերափոխելու և կրթելու անհրաժեշտության մասին միտքը, հնարամիտ սովեստության և անիմաստ տեսությունները հորինելու կողմը չչեղվելը, խրատական ճառեր չհեղինակելը, ի ցույց չխաղալը՝ ո՛չ նահատակ, ո՛չ բարերար, ճարտասանությամբ, խոսքի բանաստեղծական պաճուճանքներով չհրապուրվելը.... Նրա շնորհիվ նամակներ եմ գրում անպաճույճ ոճով.... Ես միշտ պատրաստ եմ հանդուրժողականության և հաշտության նրանց հետ, ովքեր զայրույթի պահին ոչ ճիշտ, վիրավորական են վարվել, հենց որ նրանք անեն մեր նախկին հարաբերությունների վերականգնմանն ուղղված առաջին քայլը: Ես ջանում եմ խորամուխ լինել այն ամենում, ինչ կարդում եմ՝ չբավարարվելով մակերեսային հայացքով, բայց չեմ շտապում համաձայնել բազմախոս դատարկաբանների հետ....

8. Ապոլլոնիոսից՝ ազատախոհություն և շրջահայացություն, ձգտում անշեղորեն ղեկավարվելու ոչ այլ ինչով, քան բանականությամբ՝ հավատարիմ մնալով ինքս ինձ անտանելի ցավի, երեխայի կորստի և ծանր հիվանդության ժամանակ: Նրա օրինակով ես իրազննաբար համոզվեցի, որ նույն անձում մեծագույն նպատակամիտությունը կարող է ներդաշնակվել գիջողամտության հետ: Երբ վիճակվում է դժվարությամբ ինչ-որ բան հասկացնել, չեմ զայրանում և համբերությունս չեմ կորցնում, քանզի տեսել եմ մարդու, ով խորագույն գիտելիքներ հաղորդելու փորձառությունն ու վարպետությունը համարում էր իր արժանիքներից փոքրագույնը: Նրանից ես սովորեցի, թե ինչպես պետք է բարեկամներից ընդունել այսպես կոչված ծառայություններ՝ չզգալով ինքդ քեզ հավերժ պարտական, բայց և անտարբերություն չդրսևորելով:

9. Սեքստոսից՝ բարյացակամություն. ընտանիքի հոր ղեկավարած տան օրինակ, պատկերացում բնությանը համահունչ կյանքի և իրական մեծության մասին, հոգատար վերաբերմունք բարեկամների կարիքների նկատմամբ, տգիտությունը, մակերեսահայեցությունը, ինքնապարծությունը համբերատար հանդուրժելու և բոլորի հետ հաշտ լինելու ունակություն: Շփումը Սեքստոսի հետ հաճելի էր ցանկացած շողոքորթությունից, և հակառակ իր ցանկության՝ հենց իրենց շողոքորթների մոտ էլ նա մեծագույն պատիվ ուներ: Նրանից ես սովորեցի մեթոդաբար գտնել և միմյանց կապել կյանքի հիմնարար կանոնները, զայրույթի կամ որևէ այլ կրքի նշանակներ երևան չհանել, անխռովությունը զուգակցել ամենանորբ ակնածական կապվածության հետ, տեր լինել բարի համբավի՝ պահպանելով պարկեշտությունը, գիտելիքներ կուտակել, դրանք ի ցույց չդնելով:

10. Ալեքսանդր քերականից սովորեցի ձեռնպահ մնալ հանդիմանելուց և կծու դիտողություններ անելուց նրանց, ովքեր խոսքում օտարաբանություններ, աղավաղումներ և անբարեհունչ բառեր են գործածում` իմ պատասխանի, հաստատման կամ առարկայի (այլ ոչ թե խոսքի դարձվածքի) համատեղ վերլուծության, կամ մեկ այլ պատշաճ եղանակով հիշեցման միջոցով նրանց պատշաճավոր արտահայտություններ առաջարկելով:

11. Ֆրոնտոնոսից` ըմբռնումն այն բանի, որ բռնապետության հետևանքը զրպարտությունը, խուսափանքությունը, երեսպաշտությունն են լինում, և այն, որ ընդհանրապես մարդիկ, ովքեր մեզնում արիստոկրատ են համարվում, աչքի են ընկնում անգթությամբ և անհոգի են:

12. Պլատոնական Ալեքսանդրից ես սովորեցի նամակներում և խոսակցություններում հաճախակի, հանգամանքներով չպարտադրված, զբաղվածության հղումներից խուսափել և «անհետաձգելի» գործերի պատրվակով խույս չտալ մերձավորների նկատմամբ պարտականություններից:

13. Կատուլոսից` ուշադրություն բարեկամների նույնիսկ անհիմն ու անմիտ բողոքների նկատմամբ, ձգտում հարթելու բոլոր հակամարտությունները, սրտաբաց հարգալիություն իմ ուսուցիչների նկատմամբ, նրանց փառաբանելու ցանկություն.... ինչպես նաև ճշմարիտ սեր երեխաների նկատմամբ:

14. Իմ եղբայլ Սևերոսից` սեր մերձավորների նկատմամբ, ճշմարտության և արդարության սեր.... բոլորի համար հավասար օրենքներով, իրավահավասարության և համընդհանուր հավասարության սկզբունքներով կարգավորվող պետության, քաղաքացիների ազատությունն ամեն ինչից վեր դասող իշխանության մասին պատկերացումները: Նրան են նաև պարտական իմաստասիրության նկատմամբ մշտական հարգանքով, բարեգործությամբ, մշտականությամբ առատածեռնությամբ, լավատեսությամբ և բարեկամական զգացմունքների հավատով: Նա երբեք չէր թաքցնում որևէ մեկի զանցանքների դատապարտումը, իսկ նրա բարեկամներին հարկ չկար կռահումներ անելու նրա ցանկությունների մասին. դրանք բոլորին հայտնի էին:

15. Մաքսիմոսից` ինքնատիրապետում, օտար ազդեցություններին չենթարկվելու կամք, առույգություն դժվարին կացություններում, այդ թվում` հիվանդությունների ժամանակ, հավասարակշռված բնավորություն, սիրալիություն և սեփական արժանապատվության զգացում, ջանասիրություն ընթացիկ գործերի ժամանակին կատարման մեջ: Ինչ էլ որ ասեր Մաքսիմոսը, բոլորը հավատում էին նրա անկեղծությանը, ինչ էլ որ աներ` նրա բարի մտադրություններին: Նրանից ես սովորեցի ոչնչից չզարմանալ, չհապշել, գործ անելիս չչտապել և չհապաղել, զլուխը չկորցնել, վիատությանն անձնատուր չլինել, ուշացած զայրույթ և կասկածամտություն հարուցող զուր գովասանքներ չշռայլել, այլ լինել ներողամիտ, բարերարություն անել` խորշելով ստից, նկատի ունենալով գործածի անուղելիությունը, այլ ոչ թե ուշացած ուղղումները:

Նա կարողանում էր կատակել, պահպանելով պարկեշտությունը, չդրսևորելով արհամարհական գոռոզություն, բայց ոչ ոք իրեն չէր համարում նրանից բարձր:

16. Հորիցս {Ժառանգել են} մեղմաբարոյություն և հանգամանորեն կշռադատված որոշումներում անհողդողդ հաստատականություն, կեղծ մեծարանքի նկատմամբ հետաքրքրության բացակայություն, սեր աշխատանքի նկատմամբ և ջանասիրություն, ուշադրություն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կարող են ներկայացնել որևէ հանրագուտ առաջարկ, հաստատուն հատուցում յուրաքանչյուրին ըստ իր արժանիքի, ըմբռնումն այն բանի, թե որտեղ է պետք խստություն, իսկ որտեղ՝ վերին աստիճանի մեղմություն: Հորս շնորհիվ՝ տղաների հետ սիրային գործերի դադարեցում և նվիրվածություն հասարակական գործերին: Հայրս թույլ էր տալիս իր բարեկամներին չգալու ճաշկերույթներին, և պարտադիր չէր ճանապարհորդությունների ժամանակ նրան ուղեկցելը: Նրանք, ովքեր բացակայել էին իրենց գործերով, վերադառնալիս պահպանում էին նրա նախկին բարեհաճությունը: Խորհրդակցությունների ժամանակ նա համառորեն պնդում էր գործի բոլոր հանգամանքների հետազոտումը և չէր շտապում վերջ դնել քննարկմանը՝ բավարարվելով մտքին եկած առաջին որոշմամբ: Բարեկամների հետ հարաբերություններում կայունություն էր պահպանում՝ չփոխելով դրանք հագեցածության պատճառով, բայց և չտրվելով դրանցով չափազանց տարվելուն: Ինքնուրույնություն ամեն ինչում, պայծառ խելք, հեռավոր ապագայի իրադարձությունների կանխատեսություն, շրջահայաց տնօրինելու ունակություն ամեն ինչում, ընդհուպ մինչև մանրունքները, առանց սեփական ընդունակություններով գոռոզանալու նշույլի: Նրա օրոք ողջունի բացականչությունները և ամեն տեսակի շողոքորթությունները քչացան: Եվ անխոնջ ու անդադար պահպանումը նրա, ինչ անհրաժեշտ է պետությանը, խնայողությունը ծախսերում և ինքնատիրապետում, երբ դրան համար իրեն մեղադրում էին: Եվ սնահավատ վախ չունեի աստվածներից, իսկ ինչ վերաբերում է մարդկանց, ապա ո՛չ ժողովրդին հաճոյանալ կար, ո՛չ դուր գալու ձգտում, ո՛չ շողոքորթություն ամբոխին, այլ ընդհակառակը՝ զգաստամտություն և հիմնավորվածություն և երբեք նորամուծության ճաշակագուրկ հետամտում: Այն ամենից, ինչ դարձնում է կյանքը դյուրին (իսկ դա ճակատագիրը տալիս էր նրան առատորեն), նա օգտվում էր և համեստորեն և միաժամանակ պատրաստակամությամբ, այնպես որ հանգիստ վերցնում էր այն, ինչ կա և կարիք չունեի այն բանին, ինչ չկար: Եվ ոչ ոք չէր ասի նրա մասին, թե սովեստ է, գռեհիկ դատարկաբան կամ ձևապաշտ, այլ հակառակը՝ որ նա կայացած, կատարյալ մարդ է՝ զերծ քծնանքից ու ընդունակ դեկավար և՛ իր, և՛ օտար գործերի: Ի լրումն՝ նա զնահատում էր ճշմարիտ իմաստասերներին, իսկ մյուսներին չէր պախարակում, թեև նրանց ազդեցության տակ չէր ընկնում: Բացի դրանից՝ մարդամոտություն և սիրալիրություն, բայց ոչ չափազանց: Իր մարմնի մասին նա հոգ էր տանում պատշաճ կերպով, ոչ որպես ինչ-որ կենսամոլ անձ և ոչ էլ ցուցադրաբար, սակայն չէր քամահրում այն, որպեսզի մարմնի խնամքի շնորհիվ ինչքան հնարավոր է քիչ զգա բժշկության, ներքին և արտաքին գործածության դեղամիջոցների կարիքը:

Մանավանդ նա առանց որևէ նախանձի ընդառաջում էր ինչ-որ բանով՝ լինել արտահայտիչ խոսք, օրենքների կամ բարքերի հետազոտում, թե մի այլ որևէ բան, բացառիկ մարդկանց:

Նա օժանդակում էր այն բանին, որպեսզի յուրաքանչյուրը հարգի լինի՝ համապատասխան իր շնորհների:

Չնայած ամեն ինչում պահպանում էր հայրական սովորույթները, սակայն ոչ մեկին նկատելի չէր, որ նա ջանում էր դրանք պահպանել.... Բացի դրանից, նրանում չկար դես ու դեն ընկնելու և անդադրում բնավորություն, նա ժամանակն անցկացնում էր նույն տեղերում և նույն զբաղմունքով:

Եվ գլխացավի նոպաներից հետո նա մեկեն դառնում էր առույգ ու լի եռանդով՝ առօրյա ծառայությունների համար:

Նա շատ գաղտնիքներ չուներ, ընդհակառակը՝ քիչ և այն էլ հազվադեպ. դրանք բոլորն էլ բացառապես պետական գործերին էին վերաբերում: Ջվարձանք կազմակերպելիս, շինարարություն անելիս և նպաստներ բաժանելիս ողջմիտ էր և չափավոր: Նա ուշադրություն էր դարձնում պարտքի բուն կատարմանը, այլ ոչ թե փառքին, որին բերում է պարտքի կատարումը:

Տարածած չէր օգտվում բաղնիքներից, չէր տարվում շքեղ շինությունների կառուցմանը, սննդի, գործվածքի, հանդերձների գույնի, գեղեցիկ ստրուկների ընտրության հարցերում հեշտ բավարարվող: Նրանում կոպիտ, անվայելուչ, անզուսպ ոչինչ չկար, ոչինչ այնպիսին, որ թույլ կտար խոսելու «ոչ բանական ջանքի» մասին, ընդհակառակն, նա ամեն ինչ ուշադրությամբ քննում էր ամենայն մանրամասնությամբ, կարծես ազատ ժամանակ, հանգիստ, հերթականությամբ, համբերատար, գործի էությանը համապատասխան: Հորս համապատասխան կլինեի այն, ինչ պատմում են Սուկրատեսի մասին, և՛ անձնապահ լինելու, և՛ վայելք ապրելու նրա կարողության մասին, երբ նույն ժամանակ մեծամասնությունն ի վիճակի չի զսպվածության, չի տրվում վայելքների: Լինել կայուն և՛ մեկում, և՛ մյուսում, լինել հանոզիչ և սթափ դատողություններում. դա կատարյալ և անհաղթ հոգով մարդու հատկություն է:

17. Աստվածներից {ստացել են} այն, որ ունեն լավ պապեր, լավ ծնողներ, լավ քույր, լավ ուսուցիչներ, լավ տնեցիներ, ազգականներ, բարեկամներ, համարյա բոլորը: Եվ այն, որ նրանցից ոչ մեկին ոչնչով չեն նեղացրել, չնայած ունեն այդպիսի հակում, և առիթի դեպքում կարող էի դա անել:

Աստվածների բարերարությունն է, որ չի եղել հանգամանքների այդպիսի զուգադիպում, որը կարատավորեր ինձ:

Եվ այն, որ ես երկար չեմ դաստիարակվել պապիս սիրուհու մոտ: Եվ որ փրկեցի իմ պատանեկությունը. և որ չհասունացա վաղաժամ, այլ նաև փոքր-ինչ հետաձգեցի այն:

Ես սովորեցի ենթարկվել պետին և հորս, ով դիտավորյալ կերպով իմ միջից արմատախիլ էր անում ամեն տեսակ ամբարտավանություն և ներշնչում էր ինձ, որ նույնիսկ արքունիքում պետք չեն ո՛չ թիկնապահներ, ո՛չ շքեղ հանդերձներ, ո՛չ ջահեր, ո՛չ արձաններ և նմանատիպ ճոխություն, բայց որ կա հնարավորություն ինքնասահմանափակման, ինչքան հնարավոր է շատ մերձենալով մասնավոր անձանց կենցաղին, և որ դրանից բնավ երբեք չես դառնում ավելի դանդաղկոտ և վեհերոտ, երբ պետք է կառավարման գործերում գործություն դրսևորել:

Ես ունեմ այնպիսի եղբայր, ով իր բարոյական հատկանիշներով կարող էր խթանել ինձ դեպի զարգացում և միաժամանակ ուրախացնում էր ինձ և՛ մեծարանքով, և՛ սիրով:

Երեխաներս աշխարհ են եկել բավական խելոք և առանց մարմնական թերությունների: Լավ է և այն, որ ես չցուցաբերեցի նկատելի հաջողություններ ո՛չ ճարտասանության մեջ, ո՛չ բանաստեղծական արվեստում, ո՛չ մնացյալ զբաղմունքներում, որոնց ես, հավանաբար, կտրվեի, եթե զգայի, որ նրանցում արագ առաջ են գնում:

Ես չհապաղեցի ապահովել իմ դաստիարակներին այն պատվավոր դիրքը, որը նրանք,

ինչպես ինձ թվում էր, ցանկանում էին, և չհետաձգեցի նրանց հույսերի իրականացումը հետագա ժամանակներին այն պատրվակով, որ նրանք դեռ երիտասարդ են:

Եվ այն, որ ես ծանոթացա Ապոլլոնիուսի, Ռուստիկուսի և Մաքսիմուսի հետ: Հաճախ և պարզորոշ պատկերացում էի ունենում այն մասին, թե ինչպիսին է բնությանը ներդաշնակ կյանքը, այնպես որ, քանզի դա կախված է աստվածներից ու նրանցից բխող շնորհներից, ներգործությունից և ներշնչումներից, ոչինչ արդեն չի խանգարում ինձ ապրել բնությանը ներդաշնակ, իսկ եթե ինձ դրա համար ինչ-որ բան չի բավարարում, ապա միայն իմ մեղքով ու որովհետև ես ճշտորեն չեմ պահպանում աստվածներից բխող հիշեցումները և համարյա ուղղակի հորդորանքները:

Եվ այն, որ ես դեռ այսչափ պահպանել եմ իմ առողջությունն այսպիսի կյանքի դեպքում: Ես հաճախ բարկանում էի Ռուստիկուսի վրա, բայց ոչ մի այնպիսի բան չարեցի, որի համար հետո կզղջայի:

Մայրս, ում վիճակված էր երիտասարդ մահանալ, իր վերջին տարիներն այնուամենայնիվ ինձ հետ ապրեց:

Քանի անգամ էլ ես ցանկացա օգնել որևէ չքավորի կամ ինչ-որ բանով կարիքավորի, ինձ երբեք չվիճակվեց լսել, որ դրա համար դրամ չունեն: Ինձ էլ առիթ չի եղել ընկնել այնպիսի կարիքի մեջ, որ ուրիշից պարտք վերցնեմ:

Եվ այն, որ կինս այնքան հնազանդ է, այնպես քնքուշ սիրելի, այնպես բարեհոգի:

Եվ այն, որ բազմաթիվ պիտանի դաստիարակներ եղան երեխաների համար:

Աստվածներին ես պարտական եմ և այն բանի համար, որ երազներում ինձ տրվեց օգնություն:

Եվ այն, որ երբ ձգտում էի իմաստասիրության, չհանդիպեցի որևէ սովեստի, չնստեցի պատմիչների ստեղծագործությունների առջև, չզբաղվեցի հետևությունների վերլուծությամբ և չտրվեցի երկնային մարմինների ուսումնասիրությանը:

Չէ՞ որ այդ ամենը զգում է աստվածների և ճակատագրի օգնության կարիքը:

Երկրորդ գիրք

1. Առավուտյան հարկ է ասել ինքդ քեզ. «Այսօր ստիպված կլինեն հանդիպել աներես, անշնորհակալ, հանձնապաստան, նենգ, նախանձոտ, անհաշտ մարդկանց հետ: Այդ հատկությունները ծագում են բարու և չարի չիմացությունից: Իսկ ես, որ ճանաչել եմ բարու հիասքանչ և չարի անարգական բնույթները, հասկանում եմ նաև նրանց բնույթը, ովքեր մոլորվում են: Նրանք ինձ հարազատ են ոչ արյամբ և ծագմամբ, այլ աստվածային բարեհաճությամբ և բանականությամբ: Ես իմացությամբ պաշտպանված եմ նրանց չարիքից: Նրանք չեն կարող ինձ ներքաշել ինչ-որ ամոթալի բանի մեջ: Բայց և չի կարելի գայրանալ ու ատել նրանց, ովքեր ինձ հարազատ են: Մենք ստեղծված ենք համատեղ գործունեության համար, ինչպես ոտքերը և ձեռքերը, կոպերը, վերին և ստորին ծնոտները: Ուստի հակազդել միմյանց՝ հակառակ է բնությանը, իսկ սրտնեղել և խորշել այդպիսի մարդկանցից՝ նշանակում է նրանց հակազդել»:

3. Աստվածների արարածը լեցուն է նախախնամությամբ: Պատահականությանը վերագրվողը նույնպես առաջանում է ոչ առանց բնության մասնակցության, այսինքն՝ կապված է նրան, ինչի վրա տիրում է նախախնամությունը: Ամեն ինչ ծագում է այդ ակունքից. նրանում և՛ անխուսափելին է, և՛ ողջ աշխարհին օգտակարը. դրա մասն էս դու: Բնության ցանկացած մասի համար բարիք է այն, ինչ ծնում է Ամբողջի բնությունը և ինչ օժանդակում է իր պահպանմանը: Ինչպես տարրերի, այնպես էլ բարդ մարմինների փոփոխությունները նպաստում են աշխարհի պահպանմանը: Ահա մտքեր, որոնք քեզ պետք է բավարարություն տան, թող նրանք լինեն քո հիմնադրույթները....

4. Հիշիր, թե որ ժամանակներից ես դու մի կողմ դնում այդ մտորումները և քանի անգամ, ժամկետի երկարածում ստանալով աստվածներից, չես օգտվել դրանից: Հարկ է վերջի վերջո գիտակցել, թե ինչպիսի աշխարհի ես դու պատկանում որպես մաս, որ աշխարհատիրակալի արտահոսումն էս: Իմացիր, որ քո կյանքի ժամանակը սահման ունի, և եթե չօգտվես դրանից սեփական կրթության համար, ապա այն կանհետանա, ինչպես կանհետանաս և դու, և այլևս չի վերադառնա:

5. Հոգ տար այն գործի մասին, որով այժմ զբաղված ես, որպեսզի այն կատարես հռոմեացուն և այրին արժանավայել կերպով, կատարյալ լրջությամբ, անկեղծությամբ, մարդկանց նկատմամբ սիրով և արդարությամբ: Հեռացրու քեզնից այլ մղումները:

Հաջողություն կլինի, եթե յուրաքանչյուր գործ կատարես՝ որպես կյանքումդ վերջինը՝ ազատվելով կրքերով զրգռվող անխոհեմությունից, բանականության պատվիրանների նկատմամբ քամահրանքից, երեսպաշտությունից, եսականությունից սեփական ճակատագրից դժգոհությունից:

Տեսնում ես, թե ինչ համեստ են պահանջները, որոնք կատարելով՝ ցանկացածը կարող է հասնել երանելի, աստվածային կյանքի: Աստվածներն իրենք էլ նրանից, ով կատարում է դա, ոչ մի այլ բան չեն պահանջում:

7. Թող չցրեն քեզ դրսից մոտո՞ղ եկողները: Քեզ համար ժամանակ ստեղծիր, որպեսզի սովորես ինչ-որ լավ բան և դադարես առանց նպատակի թափառելուց: Պետք է զգուշանալ նաև մեկ այլ դաժան մոլորությունից: Չէ՞ որ խելացնոր են մարդիկ, ովքեր ողջ կյանքում գործ անելու ուժ չունեն և, այնուամենայնիվ, նպատակ չունեն, որին լիովին կհամապատասխանեցնեն բոլոր ձգտումները և պատկերացումները:

8. Հեշտ չէ ցույց տալ որևէ մեկին, ով դժբախտ լինելու այն բանից, որ անուշադիր է եղել օտար հոգում կատարվողի նկատմամբ: Բայց անխուսափելիորեն դժբախտ կլինի նա, ով չի հետևում իր սեփական հոգու շարժումներին:

9. Միշտ հարկ է հիշել այն մասին, թե ինչպիսին է Ամբողջի բնույթը, ինչպիսին է իմ բնույթը, ինչպիսին է մեկի հարաբերությունը մյուսի հետ, և որպիսի Ամբողջի որ մասն է հենց իմ բնույթը, ինչպես նաև այն մասին, որ ոչ ոք չի կարող խանգարել միշտ գործել և խոսել ներդաշնակաբար այն բնույթին, որի մասն ես դու:

10. Թեոֆրաստոսը, գնահատելով տարբեր զանցանքները (ինչքանով որ այդպիսի գնահատականը հնարավոր է սովորական տեսանկյունից), որպես ճշմարիտ իմաստասեր նկատում է, որ տենչերի ազդեցությամբ կատարված զանցանքներն ավելի ծանր են, քան զայրույթի ազդեցությամբ կատարվածները: Չէ՞ որ զայրացողը, ով երես է թեքել բանականությունից, զգացել է, ըստ երևույթին, ինչ-որ մի դառնություն և գաղտնի վիշտ, իսկ տենչի արդյունքում զանցանք գործողը, ի վիճակի չլինելով դիմակայել վայելքի գայթակղությանը, դրսևորում է, ըստ երևույթին, իր արարքներում ավելի շատ անբարոյականություն և գրգռություն: Այդ իսկ պատճառով ճիշտ է, վճռում է Թեոֆրաստոսը, որ ավելի շատ պարսավանքի արժանի է վայելքի հետ կապված զանցանքը, քան վշտի հետ կապվածը: Ընդհանրապես այդ մարդկանցից մեկը ավելի շուտ նման է նրան, ում զայրույթը ծագել է տառապանքի զգայությունից, որը կապված է ավելի վաղ նրա կրած անարդարության հետ, երբ մյուսը ինքնական ձգտում է անարդարության հրապուրված ինչ-որ գործողության նկատմամբ իր տենչանքով:

11. Ամեն ինչ հարկ է անել, ամեն ինչի մասին խոսել և մտորել այնպես, կարծես յուրաքանչյուր ակնթարթ քեզ համար կարող է լինել վերջինը: Եթե աստվածները գոյություն ունեն, ապա ամենևին սարսափելի չէ մարկանց թվից դուրս մնալը. չէ՞ որ աստվածները չեն գցի քեզ չարիքի մեջ: Իսկ եթե աստվածները գոյություն չունեն կամ մարկանց հետ չեն ցանկանում գործ ունենալ, ապա ի՞նչ իմատ ունի ապրել աշխարհում, որտեղ չկան աստվածներ կամ չկա նախախնամություն: Բայց աստվածները գոյություն ունեն և հոգատարություն են դրսևորում մարդկանց նկատմամբ: Նրանք այնպես են կարգավորել, որ ամբողջովին մարդուց է կախված՝ ընկնի, թե չընկնի իրական չարիքի մեջ: Իսկ եթե չարիք է ևս ինչ-որ բան, ապա նրանք հոգ են տարել նաև, որպեսզի յուրաքանչյուրից կախված լինի նրա մեջ չընկնելը: Բայց այն, ինչ վատը չի դարձնում մարդուն, կարո՞ղ է արդյոք վատը դարձնել մարդկային կյանքը: Ամբողջի բնույթը չէր կարող վրիպել այդպես՝ ոչ անգիտությամբ, ոչ էլ նախագգուշացնելու կամ ուղղելու անզորությամբ այն դեպքում, եթե նա ամենիմաց է. չէր կարող նա նաև ոչ անզորության, ոչ էլ անմտության պատճառով թույլ տալ այնպիսի սխալ, ինչպիսին ինչպես լավ, այնպես էլ վատ բոլոր մարդկանց առանց ընտրության բարիքների և չարիքի բաշխումն է: Կյանքը և մահը, փառքը և անպատվությունը, տառապանքը և հաճույքը, հարստությունը և աղքատությունը. այս ամենը հավասարապես բաժին է ընկնում ինչպես լավ մարդկանց, այնպես էլ վատերին: Այդ ամենը ո՛չ հիանալի է և ո՛չ էլ անոթալի, հետևաբար ո՛չ բարիք է և ո՛չ էլ չարիք:

12. Ի՞նչ է մահը: Եթե վերցնենք նրան ինքնին և վերանանք այն ամենից, ինչ հորինված է նրա առիթով, ապա անմիջապես կհամոզվենք, որ նա ոչ այլ ինչ է, եթե ոչ բնության գործողություն: Իսկ բնության գործողությունից վախենալը երեխայություն է. մահը ոչ միայն բնության գործողություն է, այլև նրան օգտակար գործողություն:

Ինչպե՞ս և իր էության ի՞նչ մասով է մարդը հաղորդակցվում աստծու հետ, և ի՞նչ է կատարվում այդ մասի հետ նրա բաժանման ժամանակ:

13. Չկա ավելի խղճուկ բան, քան այն մարդը, ով չափում է ամեն ինչ բոլոր ուղղություններով, փորձելով, ինչպես ասում է բանաստեղծը, «Չափել երկրի լայնարձակությունը՝ իջնելով գետնի տակ», բացահայտել իրեն շրջապատող մարդկանց հոգիների գաղտնիքները, բայց չի գիտակցում, որ իր համար լիովին բավական է շփումը միայն իր ներքին հանճարի հետ և ազնիվ ծառայելը նրան: Իսկ վերջինս այն է, որ գերծ պահի նրան կրքերից, անխոհեմությունից և աստվածների ու մարդկանց գործերի նկատմամբ դժգոհությունից: Աստվածների գործերը հարգամեծար են իրենց կատարելությամբ, մարդկանց գործերը սիրելի են մեզ նրանց հետ ունեցած ազգակցության շնորհիվ: Բայց երբեմն վերջիններս հարուցում են ինչ-որ խղճահարություն, երբ նրանցում դրսևորվում է բարու և չարի չիմացությունը՝ այլանդակություն ոչ պակաս, քան սպիտակն ու սևը տարբերելու անընդունակությունը:

14. Ոչ ոք չի կարող զրկվել ո՛չ անցյալից, ո՛չ ապագայից: Քանի որ ո՞վ կարող է խլել ինձնից այն, ինչ ես չունեմ:

15. Ամեն ինչ կախված է համոզմունքներից:....

16. Ամենամեծ ամոթով է պատում իրեն մարդկային հոգին, երբ խորշում է ինչ-որ մարդուց կամ նետվում է նրա դեմ վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես լինում է զայրացածների հետ: Երբ ի գորու չենք անդրդվելի մնալ ընդդեմ զայթակղությունների կամ տառապանքների: Երբ նա երեսպաշտություն է անում և կեղծ ու կեղծավոր ինչ-որ բան անում կամ խոսում: Երբ իր գործողությունները և ձգտումները չի համապատասխանեցնում նպատակի հետ, այլ անում է իզուր բան և անմտորեն, քանզի նույնիսկ մանրուքներում հարկ է համապատասխանել նպատակի հետ: Իսկ բանական արարածների նպատակը հնագանդվելն է բանականությանը և հնագույն Քաղաքի ու կարգի օրենքին:

17. Մարդկային կյանքի ժամանակն ակնթարթ է, նրա էությունը՝ հավերժական ընթացք, զգայությունը՝ մշուշոտ, ողջ մարմնի կառուցվածքը՝ մահկանացու, հոգին՝ անկայուն, ճակատագիրը՝ հանելուկային, փառքը՝ անստույգ.... Կյանքը պայքար է և թափառում օտարությունում.... Բայց ի՞նչը կարող է դուրս բերել ուղի: Ոչինչ, բացի փիլիսոփայությունից: Իսկ փիլիսոփայել նշանակում է պաշտպանել ներքին հանճարը անվանարկումից և արատից, հասնել այն բանին, որ նա վեր լինի զայթակղություններից ու տառապանքներից, որպեսզի չլինի նրա գործողություններում ո՛չ անխոհեմություն, ո՛չ կեղծիք, ո՛չ երեսպաշտություն.....

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

8. Վեհացած և մաքրման ենթարկված մարդու հոգում դու չես գտնի ո՛չ թարախակույտ, ո՛չ գարշություն, ո՛չ թաքուն այլասերում: Երբ էլ, որ նրան վրա հասնի ճակատագիրը, կյանքը չի ավարտվի, ինչպես ողբերգակի մասին են ասում, թե նա թողեց բեմը՝ չավարտելով և մինչև վերջ չխաղալով դերերը: Նրանում չկա ոչինչ ստրկական, ստիպողական, չկա աներեսություն, օտարացում, չկա ոչինչ նախատինքի արժանի լույսից վախեցող:

9. Հոգացողությամբ վերաբերվիր համոզմունքներ ստեղծելու ընդունակությանդ: Այդ ընդունակությունից է ամբողջապես կախված, որպեսզի քեզ ղեկավարող ակունքում (նկատի ունի մարդուն ղեկավարող բանականությունը: Ծանոթությունը՝ ռուսերեն թարգմանչի) չառաջանա բնության և բանական էակի կառուցվածքի հետ անհաձայն որևէ համոզմունք: Հենց նա էլ պատվիրում է մեզ որոշումներում շտապողական չլինել, բարյացակամ վերաբերվել մարդկանց և հնազանդվել աստվածներին:

10. Մերժելով ամեն ինչ՝ հետևիր միայն այս փոքրաթիվ կանոններին: Հիշիր նաև, որ յուրաքանչյուրն ապրում է միայն ներկայով, աննշան կարճ ակնթարթով. մնացածը կա՛մ արդեն ապրված է, կա՛մ ծածկված է անհայտությամբ:

11. Վերոնշյալ կանոններին պետք է ավելացնել ևս մեկը: Հարկ է այնպես մոտենալ յուրաքանչյուր բնորոշվող առարկայի սահմանմանը կամ նկարագրությանը, որպեսզի արտաքին ծածկույթի տակ, նրա մասերի վերլուծությունում բացահայտվի առարկայի էությունը և այն, թե ինչից է նա բաղկացած՝ անվանելով նրա բոլոր տարրերը համապատասխան անուններով:

Չէ՞ որ ոչինչ այնքան չի նպաստում բարձր տրամադրությանը, ինչքան կյանքի բոլոր երևույթների մեջ պլանաչափ, ստույգ ներթափանցման ընդունակությունը և ունակությունը՝ դիտարկվող առարկայի նկատմամբ գտնելու այնպիսի տեսանկյուն, որ միանգամից որոշվի, թե որ աշխարհին և ինչպիսի օգուտ կա նրանից, որն է նրա արժեքը, ինչպես Ամբողջի, այնպես էլ մարդու՝ Վերին Քաղաքի քաղաքացու համար, Քաղաք, որի նկատմամբ մյուս բոլոր պետությունները միայն առանձին տնային տնտեսություններ են: Պետք է հասկանալ, թե ինչի՛ց է կազմված և ինչքան ժամանակ կտևի այն, ինչ հիմա առաջացնում է իմ գաղափարը, և ո՛ր առաքինությունն է հարկ նրա նկատմամբ գործադրել՝ արդյոք մեղմաբարոյություն, խիզախություն, արդարացիություն, հավատարմություն, պարզություն, ինքնաբավարարվածություն կամ այդ տեսակի ինչ-որ այլ բան: Այդ իսկ պատճառով էլ յուրաքանչյուր առանձի դեպքում հարկ է հաշիվ տալ՝ ահա սա ծագում է աստծուց, սա տեղի է ունենում նախասահմանված միության կապի գործադրմամբ, այդպիսի զուգակցմամբ և ճակատագրով, իսկ սա իր գոյությամբ պարտական է ցեղակցիս, հայրենակցիս և համաքաղաքացուս, ով չնայած չգիտի, թե ինչ է պահանջում իրենից բնությունը: Բայց չէ՞ որ ես գիտեմ և այդ պատճառով վերաբերվում եմ նրան բարյացակամ ու արդարացի, համաձայն հաղորդակցման բնական օրենքի: Դրա հետ միասին ես ձգտում եմ որոշել նաև հարաբերական արժեքն ըստ էության անկարևոր իրերի:

12. Եթե դու, հետևելով ճշմարիտ բանականությանը, ջանասիրաբար, նախանձախնդրորեն և սիրով կվերաբերվես այն գործին, որով տվյալ պահին զբաղված ես, և չորս կողմից նայելով կպահպանես հանձարիդ մաքրությունը, կարծես արդեն

ժամանակն է նրանից բաժանվելու, եթե դու կվարվես այդպես՝ ոչնչի չսպասելով և ոչնչից չխուսափելով, այլ բավարարվելով առկա գործունեությամբ, ներդաշնակ բնության հետ և հերոսական ճշմարտասիրությամբ ամեն ինչում, ինչ դու ասում ես ու արտահայտվում, դու լավ կապրես: Եվ ոչ ոք ի վիճակի չէ խանգարելու այդ բանին:

13. Ինչպես բժիշկներն են միշտ ձեռքի տակ պահում գործիքներն ու սարքերը անսպասելի վիրահատության համար, այնպես և դու պատրաստ ունեցիր հիմնադրույթները աստվածային ու մարդկային գործերի իմացության համար և բոլոր, նույնիսկ ամենաաննշան արարքներում մտորիր մեկի և մյուսի կապի մասին: Առանց աստվածայինի ըմբռնման լավ չես անի ոչինչ մարդկային և հակառակը:

14.Շտապիր դեպի նպատակը, և հրաժարվելով սին հույսերից, ինքդ, քանի դեռ ուշ չէ, եկ քեզ օգնության, եթե միայն գոնե մի քիչ հոգ ես տանում ինքդ քո մասին:

15. Մարդիկ չգիտեն, թե ինչքան բազմիմաստ են այնպիսի բառերը, ինչպիսիք են գողանալ, ցանել, գնել, անգործության մատնվել, նկատել հարկ եղածը. այդ իմացության համար պետք են ոչ թե մարմնական աչքեր, այլ տեսողության մի այլ օրգան:

16. Մարմին, հոգի, խելք: Մարմնին պատկանում են զգայությունները, հոգուն՝ ձգտումները, խելքին՝ հիմնադրույթները: Տպավորություններ ստանալու ընդունակություն ունեն նաև անասունները, բուռն դրսևորվում են և՛ վայրի գազանների, և՛ Ներոնի ձգտումները, պարտականությունների առերևույթ պահպանման համար կարող են խելք օգտագործել և՛ աստվածներ չընդունող, և՛ իրենց հայրենիքին դավաճանող, և՛ զանազան զագրելիություններ անող ինքնամփոփ մարդիկ: Եթե այդ բոլորը, համաձայն ասվածի, ընդհանուր է բոլորի համար, ապա միայն լավ մարդուն է հատուկ սիրել ու ողջունել տեղի ունեցողը և նրա հետ փոխադարձաբար կապվածը, չպղծել իր կրծքում ապրող հանձարին, չանհանգստացնել և չվրդովել նրան պատկերացումների առատությամբ, այլ պահպանել նրան մաքուր, խստիվ հլու աստվածներին, ճշմարտությանն ընդդեմ երբեք ոչինչ չասող և ոչինչ չանող արդարությանը հակառակ: Եթե նույնիսկ բոլոր մարդիկ հրաժարվեն հավատալ, որ նա ապրում է այդպես պարզ, համեստ և երջանիկ, ապա նա չի բարկանա նրանցից ոչ մեկի վրա և չի շեղվի կյանքի նպատակին տանող ուղուց, որին պետք է մոտենալ մաքուր, հանգիստ, թեթև սրտով և իր ճակատագրին անտրտունջ հնազանդությամբ:

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

1. Երբ ներքին տիրապետող սկիզբը հավատարիմ է բնությանը, ապա նրա վերաբերմունքը տեղի ունեցողին այնպիսին է, որ կարող է միշտ հեշտությամբ հարմարվել հնարավորին և տրվածին: Չէ՞ որ նա սեր չի տածում ինչ-որ որոշակի մատերիայի նկատմամբ, իսկ գերադասելիին ձգտում է միայն պայմանականորեն, իր համար նյութի վերածելով այն ամենը, ինչ հայտնվում է առջևում: Նա նման է կրակի, որը տիրում է այն ամենին, ինչ նետվում է իր մեջ. թույլ լամպը կհանգչեր, իսկ վառ կրակը ակնթարթորեն պատում է մեջը ընկածին, խժռում է նրան և դրա շնորհիվ բարձրանում է ավելի վեր:
2. Իզուր ոչինչ պետք չէ անել և երբեք չվարվել այլ կերպ, քան արվեստի խիստ կանոններին համաձայն:
3. Մարդիկ փնտրում են առանձնացում պարզ գյուղական կյանքում, ինչ-որ տեղ ծովի ափին կամ լեռներում: Դու ևս երագում ես նման բանի մասին, այնինչ դա բացահայտ թերամտություն է. չէ՞ որ հնարավոր է ցանկացած ժամանակ առանձնանալ ինքդ քեզնում: Ոչ մի տեղ մարդը չի առանձնանում այդպես հանգիստ և անխռով, ինչպես սեփական հոգում: Հատկապես նա, ով ներսում ունի մի այնպիսի բան, ինչին հերիք է միայն ակնապիշ գննել, և անմիջապես թեթևություն կիջնի: Այդ թեթևությունը, իմ կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգեկան բարեկարգվածություն: Ահա այդ առանձնացմանը տրվիր մշտապես, այդպիսով նորացնելով ինքդ քեզ:
4. Թող կարճամիտի և պարզ լինեն այն փաստարկները, որոնց բավական է ապավինես, արդեն բավարար կլինեն, որպեսզի վերացնեն ցանկացած անբավականություն, այնպես որ դու կվերադառնաս քո գործերին արդեն առանց սրտմտության:
...և, գլխավորը, մի՛ ցրիր ուժերդ, դես ու դեն մի ընկիր, այլ եղիր ազատ և նայիր իրերին որպես այր, քաղաքացի, մահկանացու: Ճշմարտությունների շարքում, որոնք միշտ պետք լինեն ձեռքիդ տակ, մտքումդ պահիր հատկապես երկուսը: Առաջին՝ իրերը չեն վերաբերում հոգուն, այլ գտնվում են հանգստի մեջ նրանից դուրս. բողբոջների պատճառներն արմատավորված են միայն ներքին համոզմունքում; Երկրորդ՝ այն ամենը ինչ դու տեսնում ես, ենթակա է փոփոխության և շուտով կանհետանա: Մտորիի մշտապես և այն մասին, թե արդեն ինչքան փոփոխությունների ես դու ականատես եղել: Աշխարհը փոփոխություն է, կյանքը՝ համոզմունք:
5. Եթե բոլորիս հոգևոր սկիզբն ընդհանուր է, ապա ընդհանուր կլինի նաև բանականությունը, որի ուժով մենք բանական արարածներ ենք; Եթե այդպես է, ապա բանականությունը, որը թելադրում է, թե ինչ անել և ինչ չանել, ևս կլինի ընդհանուր. եթե այդպես է, ապա օրենքն էլ է ընդհանուր, եթե այդպես է, ապա մենք քաղաքացիներ ենք: Հետևաբար մենք հաղորդակից ենք մի որևէ քաղաքացիական կարգի, իսկ աշխարհը հար և նման է Երկնային Քաղաքին: Որովհետև ո՞վ կարող է ցուցանել որևէ այլ ընդհանուր կարգ, որը վերաբերեր ողջ մարդկային ցեղին: Այստեղից է, այս Երկնային Քաղաքից, և՛ հոգևոր սկիզբը մեզնում, և՛ բանականը, և՛ օրենքը: Այլ կերպ որտեղի՞ց: Չէ որ ինչպես այն ամենը ինձնում, որն ունի հողի հատկանիշներ, ինչ-որ հողի մասնիկ է, թացը՝ այլ տարրի մասնիկ, կենսածինը, տաքը, կրակակերպը՝ յուրաքանչյուրը սկիզբ են առնում իրենց ակունքում (քանզի ոչինչ չի առաջանում ոչնչից, ինչպես և չի վերածվում ոչնչի), ճիշտ այդպես էլ հոգևորը որևէ տեղից ծագում է:

.....

7. Վերացրու համոզմունքը, կվերանա և վնասի մասին տրտունջը: Վերացրու վնասի մասին տրտունջը, կվերանա և ինքը՝ վնասը:

8. Այն, ինչ մարդուն ավելի վատը չի դարձնում, քան նա կա, ավելի վատը չի դարձնում և նրա կյանքը ու չի վնասում նրա էության ո՛չ արտաքին, ո՛չ ներքին կողմին:

9. Օգուտը ստիպում է բնությանը վարվել այդ կերպ:

10. Ողջ տեղի ունեցողը տեղի է ունենում արդարության համաձայն. եթե ուշադիր դիտարկես, ապա կհամոզվես դրանում: Ամեն ինչ տեղի է ունենում, ասում եմ ես, ոչ միայն համաձայն որոշակի կարգի, այլ նաև համաձայն արդարության, ասես ինչ-որ մեկը բաշխել է ամբողջը համապատասխան արժանիքի: Շարունակիր սկսածդ դիտարկումը և ինչ էլ որ անես, կատարիր այն մտադրությամբ, որ դառնաս լավը այդ բառի իսկական իմաստով: Պահպանիր այդ մտադրությունը քո բոլոր ձեռնարկումներում:

12. Կյանքի բոլոր հանգրվաններում ղեկավարվիր երկու կանոններով: Առաջին՝ արա միայն այն, ինչ ներշնչում է բանականությունը: Այն քո էության տիրապետող մասն է, որը գործողություններն ուղղում է ի օգուտ մարդկանց: Երկրորդ՝ կարողացիր փոխել կարծիքդ, եթե որևէ մեկը մատնանշել է սխալդ կամ կարողացել է տարհանոզել քեզ: Բայց փոխել կարծիքդ հնարավոր է միայն արդարությանը, ընդհանուր օգտին և նման բաներին համահունչ, այլ ոչ թե այն պատճառով, որ նոր կարծիքը թվում է ավելի պարզ, հաճելի կամ փառք է խոստանում:

13. «Ունես արդյո՞ք բանականություն»: «Ունեմ»: «Ապա ինչու՞ չես օգտվում նրանից: Չէ՞ որ, եթե նա անի իր գործը, ապա ի՞նչ կմնա քեզ ցանկանալ»:

14. Դու գոյություն ես ունեցել որպես Ամբողջի մաս: Քեզ վիճակված է անհետանալ ծնունդ տվողում, ավելի ճիշտ, փոփոխությունների ուժով կուլ կգնաս լոգոսին, որը իրերի սաղմն է:

16. Եթե դու համակվես հայտնի հիմնադրույթներով և տրվես բանականությանը ծառայելուն, ապա տասը օր հետո կթվաս աստված նրանց, ում այժմ թվում ես գազան և կապիկ:

17. Մի՛ապրիր այնպես, կարծես քեզ դեռ տասը հազար տարվա կյանք է վիճակված: Արդեն մոտ է ժամդ: Քանի ապրում ես, քանի դեռ հնարավորություն կա, ձգտիր դառնալ արժանավոր:

18. Ինչքան ազատ ժամանակ է շահում նա, ով չի նայում, թե ինչ ասաց, արեց կամ մտածեց իր մերձավորը, այլ միայն նրան, թե ինչ է անում ինքը, որպեսզի պահպանի իր գործողություններում արդարությունը և բարեպաշտությունը: Աղաֆոնի խոսքերով. «Մի՛որոնիր ուրիշների արատները, այլ գնա քո ուղիղ ճանապարհով, որևէ կողմ չթեքվելով»:

20. Ողջ գեղեցիկը, ինչ էլ որ նա լինի, գեղեցիկ է ինքնին. գովեստը նրա բաղկացուցիչ մասը չէ: Ուստի գովեստից այն չի դառնում ո՛չ ավելի վատը, ո՛չ ավելի լավը: Ես

այստեղ նկատի ունենմ եւ այն, ինչ անվանվում է գեղեցիկ սովորական տեսակետից, ինչպէս օրինակ նյութական իրերը եւ արվեստի ստեղծագործությունները: Իսկ ինչպիսի գովեստի կարիք կարող է ունենալ ճշմարտապէս գեղեցիկը: Ոչ ավելին, քան օրենքը, ոչ ավելին, քան ճշմարտությունը, ոչ ավելին, քան բարյացակամությունը, ոչ ավելին, քան ազնվությունը: Ի՞նչն է այս ամենից գեղեցիկ գովեստի հետևանքով կամ այլասերվում է պարսավանքի պատճառով:.....

23. Աշխատի: Այն ամենը, ինչ ներդաշնակում է քեզ հետ, պատշաճում է եւ ինձ, եւ ոչ մի բան, որ համապատասխանում է քեզ ըստ ժամանակի, ինձ համար էլ չի գալիս ո՛չ չափազանց վաղ, ո՛չ էլ չափազանց ուշ: Բնություն~ն: Քո ժամանակների փոփոխության մեջ հասունացող ամեն ինչ անհրաժեշտ է եւ ինձ: Ամեն ինչ սկիզբ է առնում քեզնից, ամեն ինչ կենում է քեզնում, ամեն ինչ վերադառնում է դեպի քեզ:...

24. Իմաստասերն ասում է. «Եթե ցանկանում ես հասնել հոգեկան հանգստության, ապա սահմանափակիր քչով քո գործունեությունը»: Բայց ավելի լավ չէր լինի ասել «անհրաժեշտով» եւ նրանով, ինչ պատվիրում է բնությունից քաղաքացիական էակի բանականությունը, եւ ըստ որում, թե ինչպէս է պատվիրում: Այդ դեպքում մենք կունենանք ոչ միայն այն հոգեկան աշխարհը, որը պայմանավորվում է գեղեցիկ արարքներով, այլ նաև այն, որը պայմանավորվում է նրանց փոքրաքանակությամբ: Չէ որ մեծ մասը նրա, ինչ մենք խոսում եւ անում ենք, անհրաժեշտ չէ, եւ եթե որևէ մեկը կարողանար խուսափել դրանից, ապա կլիներ հարուստ ազատ ժամանակով եւ ավելի աղքատ անհանգստություններով: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր առանձին դեպքում հարկ է հարցնել ինքն իրեն. «Վերաբերվում է, արդյո՞ք, այս բանն անհրաժեշտի թվին»: Եվ պետք է բացառել ոչ միայն ոչ անհրաժեշտ արարքները, այլ նաև ոչ անհրաժեշտ պատկերացումները, քանզի հենց նրանց են հաջորդում աննպատակ եւ անբովանդակ արարքները:

25. Փորձիր, թե ինչքանով քեզ կհաջողվի ապրել լավ մարդու կյանքով, ով բավարարվում է Ամբողջի կարգի շնորհիվ իրեն բաժին հասածով, մարդու, ով բավարարվում է իր սեփական գործունեության արդարացիությամբ եւ իր տրամադրության բարյացակամությամբ:

26.... Մի իմաստակիր քո նկատմամբ, ձգտիր պարզ լինել: Մեղանչու՞մ է որևէ մեկը: Նա մեղանչում է ինքն իր դեմ: Ընդհանրապէս կյանքն անցողիկ է, հարկ է խելամտորեն եւ արդարացիորեն օգտագործել ներկան: Նույնիսկ ժամանցի ժամերին մի տրվիր շռայլանքի:

29. Եթե օտար է աշխարհին նա, ով չգիտի գոյը նրանում, ապա ոչ պակաս օտար է տեղի ունեցողը չիմացողը: Փախստական է նա, ով խուսափում է քաղաքացիականության իմաստից, կույր՝ հոգևոր աչքերը փակողը, աղքատ՝ ով ունի ուրիշի կարիքը եւ չի կրում կյանքի համար ողջ օգտակարը: Ով ընկրկում եւ հեռանում է համընդհանուր էության բանականությունից, դժգոհում է տեղի ունեցողից՝ աշխարհուրաց է: Չէ՞ որ ողջ տեղի ունեցողին ծնունդ է տալիս այն նույն էությունը, որի արգասիքն ես դու: Հրաժարվող է Քաղաքից նա, ով գատում է իր հոգին բոլոր բանական էակների միասնական հոգուց:

30... Ինձ էլ գիտությունը չի կերակրում բայց ես, այնուամենայնիվ, հավատարիմ եմ նրան:

31.Սիրիի այն պարզ արվեստը, որն ուսումնասիրել ես, և նրանում գտիր բավարարվածություն: Կյանքիդ մնացած հատվածը ապրիր ամբողջ հոգով նվիրված աստվածների կամքին, չցանկանալով լինել մարդկանցից որևէ մեկի նկատմամբ ո՛չ ստրուկ, ո՛չ բռնակալ:

32... Անհրաժեշտ է նաև հիշել, որ յուրաքանչյուր գործի նկատմամբ ուշադրությունը գնահատվում է նրանով (ինձ՝ գործով.- Ա.Տ.) և պետք է նրան համապատասխան լինի: Այսպիսով, եթե դու չգբաղվես աննշան գործերով ավելի շատ, քան պատշաճ է, ապա քեզ չի վիճակվի նաև հիասթափվել:

33.Բառերը, որոնք մի ժամանակ սովորական էին, այժմ բացատրության կարիք ունեն: Նույնը կատարվում է նաև ինչ-որ ժամանակ փառաբանված մարդկանց անունների հետ... Ամեն ինչ վաղանցուկ է և շատ չանցած սկսում է նմանվել առասպելի, իսկ հետո տրվում է լիակատար մոռացության:... Ի՞նչ է հավերժական փառքը: Չուտ ունայնություն: Բայց կա՞ արդյոք ինչ-որ բան, ինչին հարկ է լուրջ վերաբերվել: Միայն մի բան. արդարամիտ մտածմունք, հանրօգուտ գործունեություն, կեղծիքին անընդունակ խոսք և հոգևոր տրամադրություն, որն ուրախությամբ է ընդունում տեղի ունեցողը որպես անհրաժեշտություն, որպես նախատեսված, որպես ընդհանուր սկզբից և ակունքից ծագող:

36.Մշտապես մտածիր այն մասին, որ ողջ ծնվողը գոյանում է փոփոխությունների ուժով և քեզ վարժեցրու այն մտքին, որ ոչնչի այնքան հակված չէ Ամբողջի բնույթը, որքան գոյություն ունեցողը փոխելուն և նրա նմանությամբ նոր արարելուն: Քանզի ողջ գոյը ինչ-որ չափով սերմն է նրա, ինչ իրենից կառաջանա: Իսկ դու սերմ ես համարում միայն հողում ցանվածը կամ մոր արգանդում գտնվողը և քարանում ես տգիտության մեջ:

37.Մոտ է քո վախճանը, իսկ դու դեռ չես ազատվել արհեստականությունից, դեռ ազատ չես անհանգստությունից, դեռ երկյուղ ես կրում արտաքին վնասից, լեցուն չես բոլորի նկատմամբ բարյացակամությամբ, չես հասկանում, որ իմաստությունը բացառապես արդար գործունեությունն է:

38.Խորամուխ եղիր մարդկանց առաջնորդող սկզբունքի մեջ, նրանում, թե ինչն է նրանց մտահոգում, ինչի են ձգտում և ինչից խուսափում:

40.Դու միշտ պետք է պատկերացնես աշխարհը որպես միասնական էակ՝ միասնական էությամբ և միասնական հոգով: Մտածիր այն մասին, թե ինչպես է ողջը հանգում հենց իր միասնական զգացողություններին, ինչպես է նա արարում միասնական ձգտմամբ, ինչպես է ամբողջը նպաստում ողջի առաջացմանը, ինչպիսի կապ և համապատասխանություն կա ամեն ինչում:

41.Ինչպես ասում էր Էպիկտետը, «Մարդը դիով ծանրաբեռնված ստոր հոգի է»:

43.Ժամանակը Ծագողի գետն է և սրընթաց հեղեղ: Հազիվ հայտնվում է ինչ-որ բան և ահա արդեն արագ անցնում է [մեր] մոտով, բայց անցնում է մի ուրիշը և կրկին առաջինն է մեր տեսադաշտում:

44.Ողջ տեղի ունեցողն այնքան սովորական է և հայտնի, ինչպես վարդը գարնանը և խաղողն աշնանը: Այդպիսին են և՛ հիվանդությունը, և՛ մահը, և՛ զրպարտությունը, և՛ ոճրամտությունը, և՛ այն ամենը, ինչ ուրախացնում կամ վշտացնում է հիմարներին:

45.Հաջորդը միշտ հարագատ է նախորդին: Այստեղ մենք գործ ունենք ոչ թե միայն բռնությամբ միասնության բերված տարատեսակների հաշվարկի, այլ բանականությանը համապատասխան կապի հետ: Այնպես, ինչպես ներդաշնակորեն կարգավորված է ողջ գոյը, ողջ առաջացողն էլ ոչ թե անհմաստ հերթագայություն է, այլ հրաշալի ներքին մերձություն:

46.Միշտ հիշիր Հերակլիտի ասույթը. «Հողի համար մահ է ջուր դառնալը, ջրի համար՝ օդ դառնալը, օդի համար՝ կրակ և հակառակը»: Հարկ է հիշել... որ օտար է թվում նրանց (իմա՝ մարդկանց.- Ա.Տ.) այն, ինչի հետ նրանք բախվում են ամեն օր, որ պետք չէ խոսել և վարվել ինչպես երագում (քանզի այն ժամանակ էլ մեզ թվում է, թե մենք իբր խոսում և գործում ենք), և որ հարկ չկա վարվել ծնողների օրինակը կուրորեն նմանակող երեխաների նման:

48... Նայիր ողջ մարդկայինին որպես վաղանցիկի և կարճաժամկետի. այն, ինչ երեկ դեռ սաղմում էր, վաղն արդեն մուծիա է կամ աճյուն: Այսպիսով, ժամանակի մնացած պահն անցկացրու բնության հետ համաձայնեցված, իսկ հետո բաժանվիր կյանքից այնպես թեթև, ինչպես ընկնում է հասունացած ձիթապտուղը՝ փառաբանելով իրեն ծնունդ տված բնությանը և շնորհակալությամբ իրեն սերած ծառի հանդեպ:

49.Եղիր ժայռի նման. ալիքներն անդադար փշրվում են նրան բախվելով, իսկ ինքը կանգնած է անշարժ, և նրա շուրջը հանդարտվում են հուզված ջրերը: Ես դժբախտ եմ, որովհետև ինձ հետ տեղի է ունեցել այս կամ այն բանը: Ամենևին ոչ: Ընդհակառակը, ես երջանիկ եմ, որովհետև, չնայած այդ բանն ինձ հետ տեղի է ունեցել, սակայն ես չեմ տրվում թախծին, չեմ ընկճվել ներկայից, չեմ դողում գալիքի առջև: Չէ՞ որ դա կարող էր պատահել յուրաքանչյուրի հետ, բայց ամեն մարդ չէ, որ զերծ կմնար տրտմությունից: Ինչու՞ առաջինն ավելի դժբախտություն է, քան երկրորդը՝ երջանկություն: Կանվանե՞ս դու արդյոք ընդհանրապես դժբախտություն այն, ինչը չի արգելակում մարդկային բնույթին հասնել իր նպատակին: Բայց թվո՞ւմ է, արդյոք, քեզ այդպիսի արգելք այն, ինչ չի հակասում մարդկային էության պահանջներին: Որո՞նք են այդ պահանջները: Դու գիտես դրանք:

Մի՞թե տեղի ունեցածը խանգարում է քեզ լինել արդարացի, մեծահոգի, խելամիտ, լրջմիտ, զգույշ դատողություններում, ճշմարտախոհ, համեստ, շիտակ և ունենալ բոլոր մյուս հատկությունները, որոնց առկայությունն է մարդկային էության առանձնահատկությունը: Մի՞ մոռացիր քեզ տրտմության մատնող ցանկացած իրադարձության ժամանակ հիմնվել հետևյալ հիմնական մտքի վրա. «Ոչ թե այս իրադարձությունն է դժբախտություն, այլ այն արժանապատվորեն կրելու ընդունակությունն է երջանկություն»:

51.Միշտ գնա կարճագույն ուղով: Իսկ կարճագույնը բնությանը ներդաշնակ ուղին է, բոլոր խոսքերում և արարքներում ճշմարտությունը պահպանելն ու պաշտպանելը: Նման որոշումը գերծ կպահի քեզ խոնջությունից, պայքարից, ձևացումից և սնափառությունից:

Հինգերորդ գիրք

1. Եթե չես ցանկանում ուտքի վրա լինել վաղ առավոտյան, ապա ասա ինքդ քեզ. «Ես վեր եմ կենում, որպեսզի ձեռնամուխ լինեմ մարդկային գործի: Մի՞թե կարտմտեմ, որ զնում եմ այն գործին, հանում որի ստեղծված եմ և առաքված աշխարհ: Մի՞թե իմ կոչումը անկողնում մեկնված տաքանալն է»: «Բայց վերջինն ավելի հաճելի է»: «Ուրեմն դու ստեղծված ես վայելքների՞, այլ ոչ թե գործունեության ու ուժերի լարման համար: Ինչու՞ դու չես նայում բույսերին, թռչնակներին, մրջյուններին, սարդերին, մեղուներին, որոնք իրենց գործն են անում և ուժերին ներածի չափով նպաստում աշխարհի գեղեցկությանը: Իսկ դու չե՞ս ցանկանում մարդկային գործերն անել: Եվ չե՞ս շտապում դեպի այն բանը, ինչը հարիր է քո բնույթին»: «Բայց չե՞ որ պետք է նաև հանգստանալ»: «Համաձայն եմ: Սակայն բնությունը դրա համար հայտնի չափ է սահմանել, ինչպիսին սահմանել է և՛ սննդի, և՛ ընկալիքի համար: Բայց դու գերազանցում ես չափը և անցնում բավարարի սահմանը: Իսկ այ, գործունեությանդ մեջ չես հասնում այդ չափին, չես հասնում հնարավորի սահմաններին, քանզի չես սիրում ինքդ քեզ: Հակառակ դեպքում դու կսիրեիր և՛ քո բնույթը, և՛ նրա պահանջները: Իրենց գործը սիրող ուրիշները ամբողջովին տրվում են նրան, մոռանալով և՛ լվացվել, և՛ սնվել: Իսկ դու ավելի ցածր ես գնահատում քո բնույթը, քան փորագրողը՝ փորագրումը, պարողը՝ պարը, արծաթասերը՝ փողը, պատվասերը՝ փառքը: Բոլոր նրանք, երբ տարվում են իրենց գործով, գերադասում են չուտել և չքնել, միայն թե բազմապատկեն այն, ինչին հակված է իրենց հոգին: Մի՞թե հանրօգուտ գործունեությունը քեզ պակաս նշանակալի է թվում և պակաս արժանի ջանքերի»:

2. Դեմ նետելով և ջախջախելով ճնշող ու անպատշաճ ամեն տեսակի պատկերացում կամ գաղափար՝ ի՞նչ հեշտ է իսկույն և եթե հասնել լիակատար հոգեկան խաղաղության:

3. Համարիր քեզ արժանի բնության հետ համահունչ ցանկացած բառի ու գործի: Թող քեզ չհուզեն որևէ մեկի հետագա հանդիմանությունները և բանբասանքները: Եթե կարող ես անել կամ ասել որևէ գեղեցիկ բան, ապա համարձակորեն ձեռնամուխ եղիր դրան: Չե՞ որ յուրաքանչյուրն ունի իր ուղեցույց սկզբունքը և հետևում է իր ձգտումներին.....

4. Ես առաջ կգնամ՝ հաստատորեն պահպանելով իմ բնույթը մինչև մահ. միայն այդ ժամանակ ես կհանգստանամ՝ շնչառությունս տալով նրան, ինչից այն ամեն օր վերցնում էի, և վերադառնալով այնտեղ, որտեղից ծագում է հորս սերունդը, մորս արյունը, ստնտուի կաթը, այն հողը, որն այսքան տարի սնել է ինձ, որը կրում է ինձ, ով տրորում է նրան և չափից դուրս օգտվում նրա շնորհներից:

5. Դու չես կարողանում ոչ մեկին զարմացնել քո դյուրմբռնողականությամբ: Թող այդպես լինի: Բայց կան շատ այլ բաներ, որոնց առնչությամբ չես կարող ասել. «Ես դրանց համար չեմ ծնված»: Դրսևորի այն հատկանիշները, որոնք ամբողջապես կախված են քեզնից՝ անկեղծություն, լրջություն, դիմացկունություն, քամահրանք հաճույքների նկատմամբ, բավարարվածություն ճակատագրով, չափավորություն պահանջմունքներում, բարյացակամություն, ազատություն, համեստություն, դատարկախոսության և մեծամտության բացակայություն: Գիտե՞ս արդյոք, որ դեռ շատ բաներում էլ կարող էիր քեզ դրսևորել՝ չվկայակոչելով բնական անընդունակությունը և, այնուամենայնիվ, կամավոր կերպով մնում ես նախկին մակարդակին: Կամ մի՞թե քեզ ընդունակությունների բացակայությունն է պարտադրում նաև նրան, որ տրտմջում ես, ժլատություն անում, շողոքորթում, ամեն ինչում մեղադրում քո խեղճ մարմինը,

թողտվությամբ խրախուսում նրա արատները, անհիմն ինքնադրվատում ես և նման հոգեկան հուզումներ ապրում: Ո՛չ, երդվում եմ աստվածներով, ո՛չ: Ընդհակառակը, դու վաղուց կարող էիր ձերբազատվել այդ ամենից: Եթե դու իսկապես ընդունում ես քո հասկացողության և ըմբռնողության անբավարար արագությունը, ապա այդ թերությունը հարկ է վերացնել վարժությամբ, այլ ոչ թե սեփական ծուլությանը տուրք տալով՝ ամեն ինչի վրա ձեռք թափ տալով:

6. Որոշ մարդիկ, ինչ-որ մեկին լավություն անելով, հակված են նրանից երախտագիտություն պահանջելու: Այլք հակված չեն դրան, սակայն հոգու խորքում նրան համարում են իրենց պարտապանը և իրենց հաշիվ են տալիս, թե ինչ են արել: Կան վերջապես նաև այնպիսիները, ովքեր չեն մտածում այդ մասին: Նրանք նման են խաղող մատուցող վազի, որը ոչինչ չի պահանջում պտղաբերելուց հետո. այդպես վարգում է նժույզը, այդպես հետքը գտնում է շունը, այդպես է մեղր հավաքում մեղուն: Բարիք գործած մարդը չի գոռում այդ մասին, այլ անցնում է մյուս գործին, ինչպես խաղողի վազը, որը սահմանված ժամանակ պետք է կրկին խաղող պարզևի....

7. Աթենացիների աղոթքը. «Վեղի՛ր, հեղի՛ր անձրև, բարեշնորհ Ջևս, աթենական հերկերի ու դաշտերի վրա»: Կամ ընդհանրապես պետք չէ աղոթել, կամ աղոթել այդպիսի պարզությամբ ու վեհությամբ:

9. Հարկ չկա ո՛չ սրտմտելու, ո՛չ վիատվելու, ո՛չ հուսախաբվելու, եթե քեզ լիովին չի հաջողվում ամեն ինչում գործել ճիշտ սկզբունքներին ներդաշնակ: Թող որ ձախողվել ես, բայց և այնպես, կրկին պետք է դառնալ նույն բանին, գոհ լինել, եթե իրադրությունների մեծ մասում վարվում ես մարդուն արժանի կերպով, և սիրել այն, ինչին վերադառնում ես: Իմաստասիրությանը հարկ է դառնալ, ոչ որպես երեխան՝ քեռուն, այլ որպես հիվանդն իր դեղերին.... Այդ ժամանակ քեզ համար հեշտ կլինի ենթարկվել բանականությանը, և դու նրանում կգտնես քո անդորրը: Ուրեմն հիշիր, որ իմաստասիրությունը ցանկանում է այն, ինչ քո բնույթը, իսկ դու՛նաև այլ բան, ինչն անհամաձայն է քո բնույթին: Բայց ի՞նչն է ավելի գրավիչ: Մի՞թե վայելքը մեզ չի շեղում դեպի կեղծ ուղի հենց այն բանի պատճառով, որ թվում է (ընկալվում է) այդպիսին: Սակայն խորամուխ եղիր, արդյո՞ք ավելի գրավիչ չեն լինի մեծահոգությունը, ազատությունը, պարզությունը, արդարակյացությունը, բարեպաշտությունը: Իսկ ի՞նչն է ավելի գրավիչ հենց ըմբռնումից, եթե այն ընկալվում է որպես դատողության և իմացության ընդունակություն, որը հաջող կերպով հաղթահարում է բոլոր արգելքները:

10. Էությունն այնչափ թաքցված է մեզնից, որ շատ, նույնիսկ արտասովոր իմաստասերների ներկայանում է որպես անհասանելի:.... Մեր համաձայնությունը ինչ-որ բանի հետ ինչ-որ չփոփոխվող բան չէ: Իրապես, որտե՞ղ է իր հայացքները չփոխած մարդը: Այժմ անցիր քեզ շրջապատող առարկաներին. ինչքան ամեն ինչ կարճաժամկետ է և վաղանցիկ, ի՞նչ հեշտությամբ կարող է դառնալ ցոփակյացի, անառակի կամ ավազակի սեփականությունը: Այնուհետև գնիր քո ժամանակակիցների բարքերը. դժվարությամբ կարելի է հաշտ հարաբերվել նրանցից նույնիսկ ամենահաշտակյացի հետ, էլ չասենք, որ ոմանք հազիվ են հանդուրժում իրենք իրենց: Ես հրաժարվում եմ ընդունելուց, որ այս խավարում, այս կեղտում, և՛ մատերիայի, և՛ ժամանակի, և՛ շարժման, և՛ շարժվողի այսպիսի հոսունության պայմաններում կարող եմ դառնալ պաշտամունքի կամ ընդհանրապես լուրջ վերաբերմունքի առարկա: Ընդհակառակը, հարկ է առույգաբար սպասել սեփական բնական վախճանին՝ չվրդովվելով նրա հապաղումից և սփոփվելով հետևյալ երկու դրոյթներով: Առաջինը՝

ինձ ոչինչ չի կարող լինել, որը չի համապատասխանում Ամբողջի էությանը: Երկրորդ՝ ես ոչինչ չեմ կարող անել իմ աստվածության և հանճարի դեմ: Մանավանդ որ ոչ ոք չի կարող պարտադրել ինձ անել դա:

13. Ես բաղկացած եմ պատճառական և նյութական էություններից: Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չեն անէանա. ինչպես որ չեն ծագել չգոյությունից: Այդ իսկ պատճառով իմ էության յուրաքանչյուր մաս փոփոխվելով դառնում է աշխարհի ինչ-որ մասը, վերջինս իր հերթին փոփոխվելով դառնում է աշխարհի մեկ այլ մաս, և այդպես մինչև անվերջություն: Չէ՞ որ ես էլ գոյացել եմ փոփոխությունների ուժով, և նրանք էլ, ովքեր ծնել են ինձ, և այսպես շարունակ, նույնպես մինչև անվերջություն: Այս ամենը ճշմարիտ է մնում նաև այն դեպքում, եթե աշխարհը ենթակա է պարբերականության օրենքին:

14. Բանականությունը և բանական կյանքի արվեստն առանցքն են այն ընդունակության, որը բավարարված է նրանց հետ ներդաշնակ գործերով և իրենով: Նրանց ձգտումն ուղղորդվում է նրանց հատուկ սկզբնաղբյուրով, նրանց ուղին ուղղակիորեն տանում է դեպի դրված նպատակը: Այդ իսկ պատճառով նրանց հետ համաձայնեցված գործողություններն անվանվում են ճիշտ, որը մատնանշում է ուղու անվրեպությունը:

16. Ինչպիսին մեծ մասամբ քո պատկերացումներն են, այդպիսին էլ կլինեն քո մտադրությունները: Քանզի հոգին համակված է լինում այդ պատկերացումներով: Թող նա մշտապես համակվի ներքոհիշյալ պատկերացումներով: Որտեղ հնարավորություն կա ապրելու, այնտեղ էլ կարելի և լավ ապրել... Այնուհետև. յուրաքանչյուր բան ձգտում է նրան, ինչի համար ստեղծված է, իսկ նրանում, ինչին նա ձգտում է, իր նպատակն է: Բայց որտեղ յուրաքանչյուրի նպատակն է, այնտեղ էլ նրա օգուտն ու բարիքն են: Բանական արարածի բարիքը հաղորդակցությունն է: Իսկ որ մենք ստեղծված ենք հաղորդակցության համար, ապացուցված է վաղուց: Մի՞թե ակնհայտ չէ, որ ցածրակարգ արարածները ստեղծված են բարձրակարգերի համար, իսկ բարձրակարգերը՝ միմյանց: Շնչավորները բարձր են անշունչներից, իսկ շնչավորներից բարձրագույն են բանականները:

17. Խելացնորություն է անհնարինին ձգտելը: Բայց հնարավոր չէ, որ տխմարավուն մարդիկ այդպես չվարվեն:

18. Ոչ մեկի հետ չի պատահում այնպիսի բան, որին նա չկարողանա դիմանալ: Նույն բանը պատահում է ուրիշների հետ էլ, և նրանք կամ այն պատճառով, որ չգիտեն, թե իրենց հետ ինչ է տեղի ունեցել կամ, որովհետև ցանկանում են աչքի ընկնել իրենց մտքերի վեհ նկարագրով, մնում են անհողդողդ և աներեր: Սարսափելի կլիներ, եթե տգիտությունը և փառասիրությունն ավելի ուժեղ լինեին ըմբռնողությունից:

19. Իրենք իրերը բնավ չեն հաղորդակցվում հոգու հետ: Նրանք դեպի հոգի մուտք չունեն, չեն կարող ոչ փոխել այն, ոչ էլ շարժման մեջ դնել: Հոգում փոփոխությունները և շարժումը միայն իրենից են: Իսկ ինչպիսին կլինի նրա համար ողջ իրեն պատկանողը՝ կախված է նրանից, թե ինչպիսի դատողություններ նա կհամարի իրեն արժանի:

20. Մարդը մեզ ամենամոտ արարածն է, քանի որ մենք պարտավոր ենք մարդկանց համար բարիք գործել և տհաճություն չզգալ նրանցից: Իսկ եթե մարդկանցից ինչ-որ մեկը հակազդում է իմ պարտականությունների կատարմանը, ապա նա ինձ համար դառնում է ոչ պակաս անկարևոր, քան արևը, քամին, վայրի գազանը: Այդ ամենը կարող

է խանգարել ինչ-որ գործի, բայց չի փոխի տրամադրությունը և ձգտումները, շնորհիվ հոգու՝ արգելքները հաղթահարելու և հակազդեցությունը ինչ-որ ավելի գերադասելի բանով փոխարինելու ընդունակության: Այդ իսկ պատճառով այն, ինչ տվյալ գործողության համար խոչընդոտ էր, կարող է դառնալ միջոց այլ գործողության համար, իսկ այն, ինչը խանգարում էր ճանապարհին, ինքը ճանապարհ ցույց կտա:

21. Մեծարիք աշխարհում գոյություն ունեցողներից ամենակատարյալը՝ այն, որը բոլորի տերն է և բոլորին կառավարում է: Նույնչափ մեծարիք քեզնում գոյություն ունեցողներից ամենակատարյալը. այն հարազատ է առաջինին: Քանզի քեզնում էլ է նա այն, ինչ տեր է մյուս բոլորին, իսկ քո կյանքը ուղղորդվում է նրանով:

25. Ինչ-որ մեկը վա՞տ է վարվում իմ նկատմամբ: Ղե, ինչ, դա նրա գործն է: Նա ունի իր հոգեկան տրամադրությունը և իր գործելակերպը: Իսկ ես այնպիսին եմ, ինչպիսին ցանկանում է, որ լինեմ ընդհանուր բնությունը և վարվում եմ այնպես, ինչպես ցանկանում է, որ վարվեմ, իմ սեփական բնույթը:

28. Հարկ չկա նմանվելու ո՛չ ողբերգական դերասանի, ո՛չ էլ պոռնիկի:

31. Մինչ օրս քեզ ինչպե՞ս ես պահել աստվածների, ծնողների, եղբայրների, կողակցի, երեխաների, ուսուցիչների, դաստիարակների, բարեկամների, հարազատների, տնեցիների նկատմամբ: Ինքդ քո մասին կարո՞ղ ես արդյոք ասել. «Մինչ օրս ոչ մեկի չեմ նեղացրել ո՛չ խոսքով, ո՛չ էլ գործով»: Հիշիր, թե ինչքան ապրումներ ես ունեցել և ինչքան խիզախություն՝ դրանք կրելու: Հիշիր, որ կյանքիդ պատմությունն արդեն մոտ է իր ավարտին և ծառայությանդ ժամկետը՝ իր վախճանին: Հիշիր, թե ինչքան գեղեցիկ բան ես տեսել, ինչքան վայելքների և տառապանքների ես վերաբերվել քամահրանքով, ինչպես ես արհամարհել ունայն փառքը և քանի անգամ ես առաքինի վարվել անարդարների նկատմամբ:

32. Ինչպե՞ս կարող եմ անկիրթ ու անուս մարդիկ խռովել կրթված և գիտակ մարդու անդորրը: Իսկ ո՞ւմ է պետք անվանել կրթված ու գիտակ: Նրան, ով գիտի սկիզբը և նպատակը և բանականությունը՝ գոյություն ունեցող ամեն ինչի մեջ ներթափանցող և չափված փուլերով հավերժորեն բոլորին ղեկավարող:

34. Եթե դու կարող ես ընտրել ճիշտ ուղի և պատշաճ կերպով ամբողջացնել համոզմունքներդ ու գործել, ապա կարող ես երջանիկ լինել: Երկու առանձնահատկություն ընդհանուր են, ինչպես աստծու հոգու, այնպես էլ մարդու ու ցանկացած բանական արարածի հոգու համար: Առաջին՝ հոգուն օտար ոչինչ չի կարող նրա համար արգելք լինել: Երկրորդ՝ հոգին կարող է իր համար բարիք համարել բարեպաշտ տրամադրությունն ու արդար աշխատանքը և դրանցով սահմանափակել իր ձգտումը:

36. Ամբողջապես մի՛ տրվիր երևակայությանդ թռիչքին, բայց ուրիշներին օգնիր քո հնարավորության չափով և այնքանով, որ նրանք արժանի են: Նույնիսկ եթե անկարևոր գործերում նրանց մոտ թերություն է զգացվում: Բայց թող քեզ չթվա, թե այդ թերությունը վնաս է նշանակում. այստեղ ոչ մի չար բան չկա:....

Որտեղ էլ, որ ես ընկնեմ, կարող եմ երջանիկ լինել: Իսկ երջանիկ է նա, ով իր համար բարի բախտ է նախապատրաստել: Իսկ բարի բախտը հոգու բարի հակումներն են, բարի ձգտումները, բարի գործերը:

Վեցերորդ գիրք

3. Մի՛ գոհացիր մակերեսային տեսակետով: Քեզնից չպետք է աննկատելի մնան ո՛չ յուրաքանչյուր առարկայի յուրօրինականությունը, ո՛չ էլ նրա արժանիքը:

6. Անարգանքից պաշտպանվելու լավագույն ձևը անարգողին չնմանվելն է:

7. Ուրախություն և անդորր փնտրիր միայն մի բանում՝ որ Արարչին հիշելով մի հանրօգուտ գործից մյուսին անցնես:

11. Եթե հանգամանքները պարտադրեն քեզ դավաճանել հոգեկան հավասարակշռությանդ, ապա շտապի՛ր վերադառնալ դեպի ինքդ քեզ և անհրաժեշտությունից ավելի չնահանջել հոգուդ չափավոր շարժումներից: Չէ՞ որ ինչքան հաճախակի վերադառնաս ներդաշնակությանը, այնքան ավելի ու ավելի կհաստատես այն քո մեջ:

12. Եթե դու միաժամանակ ունենայիր և՛ խորթ, և՛ հարազատ մայր, ապա, իհարկե, առաջինին կվերաբերվեիր հարգանքով, բայց մշտապես կծգվեիր դեպի հարազատ մայրդ: Այդպիսին են քեզ համար արքունիքը և իմաստասիրությունը: Շարունակ դարձիր իմաստասիրությանը և նրանում փնտրիր հանգստություն. նրա շնորհիվ արքունական կյանքն էլ քեզ համար բեռ չի լինի, ինքդ էլ ուրիշներին բեռ չես լինի:

13. ...Եթե ինչ-որ բաներ թվում են մեր հավանությանն անկասկած արժանի, ապա հարկ է դրանք մերկացնել, երևան հանել դրանց ողջ ունայնությունը և հեռացնել փառքի պսակը, որը տրվել է բարբաջանքներով: Քանզի ոչինչ այնքան ունակ չէ այդպես մոլորեցնելու, որքան փառասիրությունը. և նա քեզ ավելի շատ է խաբում հենց այն ժամանակ, երբ թվում է, թե զբաղված ես ամենալուրջ գործով:

14. Մարդկանց մեծամասնությունը սովորաբար տարվում է մեռյալ կամ բուսական բնությանը պատկանող ամենասովորական բաներով, ինչպես օրինակ՝ քարերով, տախտակներով, թգենիներով, խաղողի որթերով, ձիթենիներով: Փոքր-ինչ ավելի զարգացած մարդիկ՝ շնչավոր արարածներով, օրինակ՝ մանր կամ խոշոր անասունների հոտերով: Ջարգացման հաջորդ աստիճանին կանգնած մարդիկ տարվում են նրանով, ինչ բանական հոգու կողմից է շնորհված և տիեզերական բնույթ թեև չունի, բայց ունի հատուկ իմացություն կամ օժտված է որևէ տաղանդով, կամ նույնիսկ զրկված է դրանցից. սրան է վերաբերում մեծ թվով ստրուկներ ունենալը: Իսկ նա, ով պաշտում է բանական-տիեզերական և քաղաքացիական հոգին, այլևս ոչ մի այլ կողմ չի հակվում: Նրան ամեն ինչից առավել զբաղեցնում է այն, թե ինչպես իր հոգում պահպանի բանականությունն ու հարգանքը հասարակության նկատմամբ, և օգնի մերձավորին, որ նույնն անի:

15. Փոփոխությունների հոսանքը մշտապես նորացնում է աշխարհը, ինչպես ժամանակի անընդհատ ընթացքը միշտ վկայում է անսահման հավերժության պատանեկության մասին:.....

16. Արժեքավոր չէ ո՛չ օդի արտաշնչումը, որ բույսերն էլ կարող են, ո՛չ նրա ներշնչումը, որ կարող են և՛ անասունները, և՛ գազանները, ո՛չ ուրիշից պատկերացումներ ստանալու և նկրտումներով ձևավորվելու ընդունակությունը, ո՛չ հոտային կյանքը, և ոչ էլ սնունդը. այդ ամենը ոչնչով լավ չէ սննդի մնացորդի արտաթորումից: Բայց ի՞նչն է

վերջապես արժեքավոր: Հավանության արտահայտությունը: Ոչ: Հետևաբար, ոչ էլ հավանության արտահայտությունը լեզուների միջոցով. չէ՞ որ հենց դրան է վերջիվերջո հանգում այն բարի անունը, որը կարող է տալ ամբոխը:
Այսպիսով, դու հրաժարվում ես նաև ունայն փառքից: Ի՞նչ է մնում արժեքավոր: Ինձ թվում է՝ քո բնույթին համահունչ գործունեությունը և հավատարմությունը դրան, այսինքն՝ հենց այն, ինչին ուղղված են և՛ բոլոր զբաղմունքները, և՛ արվեստները: Չէ՞ որ ցանկացած արվեստ ձգտում է այն բանին, որ իր բոլոր ստեղծագործությունները համապատասխանեն այն գործին, ինչի համար նրանք նախապատրաստվել են. դրան են հետամուտ և՛ խաղողի որթին հոգ տանող այգեպանը, և՛ ձիեր սանձահարողը, և՛ շնապահը: Իսկ ինչի՞ են ձգտում դաստիարակությունը և ուսուցումը: Հենց դա է արժեքավորը: Եվ եթե այդ հարցում ամեն ինչ բարեհաջող է, ապա ուրիշ այլ բանի կարիք չես զգա: Բայց բազմաթիվ այլ արժեքներից հրաժարվել չե՞ս կարողանում: Այդ դեպքում դու չես տիրի ո՛չ ազատության, ո՛չ ինքնաբավարարվածության, ո՛չ անխռովության: Դու, ըստ անհրաժեշտության, ստիպված կլինես նախանձել, խանդել, կասկածել նրանց, ովքեր ընդունակ են խլելու քեզնից արժեքավորածո՞ իրերը և չարամտել նրանց դեմ, ովքեր տիրում են դրանց: Ընդհանրապես նման որևէ բանի անբավարարությունը զգացողն անհրաժեշտաբար պետք է գա շփոթության ոլորտ և սկսի վատաբանել աստվածներին: Իսկ եթե դու հոգացողությամբ վերաբերվես հոգուդ և գնահատես նրան, ապա ինքդ քեզնից գոհ կլինես, համերաշխ՝ մարդկանց և համաձայն՝ աստվածների հետ.....

17. Տարրերը տարածվում են վերև, ներքև և շրջապտույտի մեջ են: Իսկ առաքինության շարժումը չի հետևում այդ ուղղություններից ոչ մեկին, բայց ավելի աստվածային է. այն շարժվում է առաջ անսխալ, թեկուզ և դժվար մատչելի ճանապարհով:

18. Ի՞նչ են անում մարդիկ: Իրենց հետ ապրող ժամանակակիցներին չեն ցանկանում փառաբանել: Իսկ միևնույն ժամանակ, չափազանց բարձր են գնահատում սերունդների մոտ ունենալիք փառքը, սերունդներ, որոնց երբեք չեն տեսել և չեն տեսնելու: Չէ՞ որ դա համարյա նույնն է, որ վշտանաս այն առիթով, թե նախնիները քեզ չեն գովերգել:

19. Եթե ինչ-որ բան քո ուժերից վեր է, մի՛ վճռիր, թե այն անհնար է մարդու համար: Բայց եթե ինչ-որ բան հնարավոր է մարդու համար և հատուկ է նրան, ապա համարիր, որ մատչելի է և քեզ:

21. Եթե ինչ-որ մեկը կարող է ակնհայտորեն ապացուցել ինձ, որ ճիշտ չեմ դատում կամ գործում, ապա ես ուրախությամբ կփոխվեմ: Քանզի ճշմարտություն եմ փնտրում, որից դեռ ոչ ոք երբեք վնաս չի կրել: Վնաս կրում է նա, ով համառորեն շարունակում է իր մոլորությունն ու տգիտությունը:

22. Ես իմ պարտքն եմ կատարում: Ոչ մի այլ բան չի կարող շեղել իմ ուշադրությունը՝ լինի դա անշունչ թե անբանական, մոլորված կամ թե ուղի չիմացող:

23. Ոչ բանական արարածներին և ընդհանրապես բոլոր իրերին ու առարկաներին վերաբերվիր մեծահոգությամբ և արժանապատվությամբ, որպես բանական էակը ոչ բանականին: Իսկ մարդկանց, որպես բանական արարածների, վերաբերվիր ինչպես հավասարի: Եվ միշտ կոչիր աստվածներին: Եվ թող քեզ համար կարևոր չլինի, թե ինչքան կտևի այդպիսի գործունեությունը: Երեք ժամն էլ բավական է:

24. Մահը հավասարեցրեց Ալեքսանդր Մակեդոնացուն իր ջորեպանի հետ: Քանզի նրանք կա՛մ ներառված են աշխարհի ներուժում, որը կրում է ապագայի սաղմերը, կա՛մ տարալուծված են ատոմների:

26. Եվ հիշիր, որ ցանկացած պարտականություն բաղկացած է առանձին պահերից, որոնք կարելի է թվարկել: Հենց դրանք էլ պետք է կատարվեն առանց դես ու դեն ընկնելու, չարձագանքելով անբավականությամբ, հարկ եղած ձևով իրականացնելով հերթական գործը:

Ամոթ է, եթե հոգիդ հրաժարվի քեզ ծառայելուց հենց նույն կյանքում, որում մարմինդ չի հրաժարվում քեզ ծառայելուց:

28. Մի՛ քայլիր Կեսարների հետքերով և թույլ մի՛ տուր, որ քեզ հրապուրեն այդ ուղով. չէ՞ որ այդպես պատահում է: Ջանա պահպանել քո մեջ պարզությունը, բարեվարքությունը, անեղծությունը, լրջությունը, համեստությունը, նվիրվածությունն արդարությանը, բարեպաշտությունը, բարյացակամությունը, սիրառատությունը, հաստատականությունը հարկավոր գործը կատարելիս: Բոլոր ջանքերը գործադրի՛ր, որպեսզի մնաս այնպիսին, ինչպիսին քեզ ցանկանում է տեսնել իմաստասիրությունը: Մեծարի՛ր աստվածներին և հոգ տար մարդկանց բարօրության մասին: Կյանքը կարճ է. երկրային կյանքի միակ պտուղը բարեպաշտ տրամադրությունն է և հասարակական բարօրությանը համահունչ գործունեությունը: Ամեն ինչում եղի՛ր Անտոնինոսի աշակերտը: Ընդօրինակի՛ր նրա նպատակամիտությունը, բանականությանը հարիր գործունեությունը, նրան երբեք չդավաճանած հավասարակշռվածությունը և բարեպաշտությունը, նրա խելքի պայծառությունը, վարմունքի քաղաքավարությունը, ունայն փառքի նկատմամբ քամահրանքը և իրերի իմացության հարցում բուռն ձգտումը: Նա երբեք չէր անցնում որևէ բանի կամ ինչ-որ մեկի մոտով առանց այն կամ նրան ուշադիր քննության ենթարկելով և համոզորեն գիտակցելով: Ի՜նչ համբերությամբ էր նա հանդուրժում անարդար հանդիմանությունները՝ նույն կերպ չպատասխանելով դրանց: Ինչպե՜ս ոչնչում չէր դրսևորում աճապարողություն և անընկալունակ էր զրպարտության նկատմամբ: Ի՜նչ ճշտակատարությամբ էր հետազոտում բնավորությունները և արարքները: Ի՜նչ հեռու էր նա ամեն ինչ պարսավելու ցանկությունից, երկչոտությունից, կասկածամտությունից և սովեստությունից: Ի՜նչ համեստ էին նրա պահանջները, երբ կացարանի, մահճի, հագուստի, սննդի, սպասարկման հարց էր առաջանում, և ի՜նչ աշխատասեր էր ու զուսպ: ... Ի՜նչ հավատարիմ և հավասարակշիռ էր նա իր բարեկամական և ընկերական հարաբերություններում: Ի՜նչ հանդուրժողությամբ էր մինչև վերջ լսում նրանց, ովքեր բացահայտորեն հանդես էին գալիս իր կարծիքի դեմ, և, ինչպե՜ս էր ուրախանում, եթր որևէ մեկը առաջարկում էր լավագույնը: Ի՜նչ բարեպաշտ էր և միաժամանակ գերծ սնահավատությունից: Թո՛ղ քո վերջին ժամը դիմավորես նույնքան հանգիստ խղճով, ինչպես նա:

31. Ես կազմված եմ մարմնից և հոգուց: Մարմինն ամեն ինչի նկատմամբ անտարբեր է, քանզի ընդունակ չէ տարբերակման: Հոգու համար միևնույն է այն ամենը, ինչ նրա գործողությունը չէ: Իսկ նրա բոլոր գործողությունները կախված են իրենից: Բայց և գործողություններից՝ միայն ներկային վերաբերողները: Քանզի ապագան և անցյալն անկարևոր են:

32. Ձեռքի և ոտքի համար աշխատանքը չի հակասում բնությանը, քանի դեռ ձեռքն ու ոտքն անում են այն, ինչ իրենց հատուկ է: Այնպես էլ աշխատանքն է մարդու համար,

որպես մարդու. քանի դեռ մարդն անում է այն, ինչ հատուկ է մարդուն, չի հակասում բնությանը: Սակայն, եթե նա չի հակասում բնությանը, ապա նա չարիք չէ:

34.Արդյոք չէ՞ս նկատում, որ հասարակ արհեստավորները մինչև որոշակի աստիճան հարմարվելով տգետների ճաշակին, այնուամենայնիվ, ամուր կերպով պահում են իրենց արվեստի իմաստը (մտածողական ունակությունը) և չեն նահանջում նրանից: Սարսափելի չէ՞ արդյոք, որ ճարտարապետը կամ բժիշկը ավելի են հարգում իրնց արվեստի բանականությունը, քան մարդն իր սեփական բանականությունը, որն ընդհանուր է աստվածների հետ:

36.Ով տեսել է ներկան, նա արդեն տեսել է հավերժության ընթացքում եղած ամեն ինչ և այն ամենը, ինչ դեռ կլինի անսահման ժամանակի ոլորաններում: Քանզի ամեն ինչ միատարր է և միօրինակ:

37.Ավելի հաճախ մտորի՞ր աշխարհում գտնվող բոլոր իրերի կապի և փոխհարաբերությունների մասին: Քանզի նրանք բոլորը կարծես միահյուսված են և այդ իսկ պատճառով միմյանց հետ համագործակցում են՝ իրար հաջորդելով որոշակի կարգով: Դա բացատրվում է շարժման անընդհատությամբ, ընդհանուր համաձայնեցվածությամբ և էության միասնությամբ:

38.Հարմարվի՞ր քեզ բաժին հասած հանգամանքներին: Եվ ողջ սրտով սիրի՞ր այն մարդկանց, որոնց հետ քեզ վիճակված է ապրել:

39.Ցանկացած գործիք, հարմարանք, կահ-կարասի կլինեն լավ վիճակում, եթե կատարեն այն գործը, ինչի համար ստեղծված են, թեև այդ առարկաները ստեղծողը նրանց կողքին չէ: Ինչ վերաբերում է բնության ստեղծած իրերին, ապա ստեղծագործական ուժը նրանց ներսում է և ապրում է հետները: Ուստի նրան (ստեղծագործական ուժին. – Ա. Տ.) հարկ է առանձնահատուկ մեծարել և վստահ լինել, որ, եթե դու վարվես նրա ցանկություններին համահունչ, ապա ամեն ինչ կլինի քո սրտով: Ճիշտ այդպես էլ Ամբողջին պատկանող ամեն ինչ նրա սրտով է:

40.Եթե դու բարիք կամ չարիք համարես քո ընտրությունից չկախված ինչ-որ բան, ապա ստիպված կլինես նման չարիքի առկայության կամ բարիքի բացակայության համար հանդիմանել աստվածներին և ատել մարդկանց, ովքեր իսկապես չարիքի գոյության կամ բարիքի բացակայության պատճառ են, կամ միայն կասկածվում են դրանում: Նման բաներին այդպիսի վերաբերմունքի դեպքում ստիպված կլինենք հաճախ անարդար վարվել: Իսկ եթե բարիք կամ չարիք համարենք միայն այն, ինչ կախված է մեզնից, ապա ոչ մի պատճառ չի լինի՝ մեղադրելու աստվածներին կամ պատերազմ հայտարարելու մարդկանց:

41.Մենք բոլորս օժանդակում ենք միասնական ընդհանուր նպատակին. ոմանք՝ իմացությամբ և ըմբռնողությամբ, ուրիշները՝ անգիտակցաբար: Այդ պատճառով էլ, կարծում եմ, Հերակլիտն ասում է, որ քնածներն էլ են գործում և նպաստում աշխարհում տեղի ունեցողին: Բայց յուրաքանչյուրն օժանդակում է յուրովի, և՛ սանձարձակ հայիոյողը, և՛ նա, ով փորձում է հակազդել տեղի ունեցողին ու բացառել այն: Եվ այդպիսի մարդիկ պետք են աշխարհին: Հետևաբար, քեզ է վիճակված վճռել, թե որ խմբին ես դասվելու:.....

42.Մի՞թե արևը հանձն է առնում անձրևի գործը, կամ Ասկլեպիոսը՝ Ղեմետրայի: Իսկ լուսատուները: Չե՞ն տարբերվում նրանք միմյանցից և միաժամանակ չե՞ն աջակցում միմյանց:

43.... Բայց եթե նույնիսկ աստվածները ոչ մի մտադրություն չունեն մեր վերաբերյալ, ապա չէ՞ որ ես ինքս կարող եմ ունենալ մտադրություններ իմ վերաբերմամբ, և պարտավոր եմ քննել, թե ինչն է ինձ օգտակար: Յուրաքանչյուրին օգտակար է այն, ինչ ներդաշնակ է իր կառուցվածքին և բնույթին: Իմ էությունը բանական և քաղաքացիական էակի էությունն է: Ինձ համար, որպես Անտոնինոսի, քաղաքը և հայրենիքը Հռոմն է, որպես մարդու՝ ողջ աշխարհը: Եվ ինձ համար բարիք է միայն այն, ինչ օգտակար է Հռոմին և աշխարհին:

44.... Բայց ուշադիր դիտարկման դեպքում կարելի է համոզվել և այն բանում, որ ընդհանրապես մեկ մարդու համար օգտակարը օգտակար է նաև մյուսներին: Օգտակարն այս դեպքում հարկ է ավելի լայն իմաստով վերցնել՝ տարածելով այն նաև անկարևոր առարկաների վրա:

47.... Լոկ մի բան է արդարև արժեքավոր՝ կյանքն ապրել ճշմարտությամբ և արդարությամբ՝ պահպանելով բարյացակամությունը նույնիսկ ստախոս և մեղսական մարդկանց նկատմամբ:

48.Եթե դու ցանկանում ես քեզ ուրախություն պարզել, ապա խորհիր առաքինությունների մասին այն մարդկանց, ում հետ ապրում ես: Մեկն աչքի է ընկնում գործարարությամբ, մյուսը՝ համեստությամբ, երրորդը՝ առատաձեռնությամբ, մյուսը՝ էլի ինչ-որ բանով: Ոչինչ այնքան ուրախություն չի պարզևում, ինչքան մեզ հետ ապրող մարդկանց բարքերում դրսևորվող առաքինությունների տեսքը: Այդ իսկ պատճառով միշտ աչքիդ առջև ունեցիր առաքինությունների կերպարը:

50.Փորձիր համոզել նրանց: Գործիր նույնիսկ նրանց կամքին հակառակ, եթե դա պատվիրված է խելամիտ արդարությամբ:....

51.Փառամուն իր բարօրությունը տեսնում էուրիշի արարքներում: Հաճույքներին նվիրվածը՝ իր ճաշակած վիճակում: Իսկ բանական մարդը՝ իր գործունեության մեջ:

53.Վարժեցրու քեզ ուշադիր վերաբերվելու այլ մարդկանց խոսքերին և ձգտիր հնարավորության սահմաններում խորամուխ լինել խոսողի հոգու մեջ: Բայց ի՞նչ ունես դու այնտեղ անելու:

54.Փեթակին օգուտ չբերողը, օգուտ չի բերի և մեղվին:

55.Եթե նավաստիները որոշեն նախատել նավավարին, կամ հիվանդները՝ բժշկին, ապա ու՞մ կլսեն: Կամ ինչպե՞ս կարող է առաջինը փրկել նավաստիներին, իսկ երկրորդը՝ առողջացնել հիվանդներին:

58.Ոչ ոք չի կարող քեզ խանգարել ապրել քո էության իմաստին ներդաշնակ, և ոչինչ տեղի չի ունենում Տիեզերքի բանականությանը հակառակ:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԻՐՔ

1. Ի՞նչ է մոլությունը: Այն, ինչ դու հաճախ ես տեսել: Եվ ինչ էլ որ տեղի ունենա, միշտ պատրաստ եղիր ասելու. «Չէ՞ որ դա հենց այն է, ինչ արդեն տեսել եմ»: Ընդհանրապես, ուր էլ նայես, ամենուր կտեսնես միևնույն բանը. դա հին, միջին և նոր պատմության բովանդակությունն է կազմում, ներկա պահին դրան է հանգում պետության և առանձին տնային տնտեսությունների կյանքը: Ոչ մի նոր բան չկա, ամեն ինչ և՛ առտնին է, և՛ կարճահավերժ:

2. Ի՞նչը կարող է ոչնչացնել հիմնադրույթները, բացի նրանց համապատասխան պատկերացումների մարումից: Բայց քո իշխանության ներքո է այդ պատկերացումները միշտ և կրկին կյանքի կոչելը: Ես կարող եմ տվյալ առարկայի մասին համապատասխան համոզմունք կազմել: Իսկ եթե այդպես է, ապա ինչո՞ւ պետք է տազնապեմ: Այն, ինչ հոգուցս դուրս է, բացարձակապես ոչ մի կապ չունի հոգուս հետ: Յուրացրու դա, և դու ճիշտ ուղու վրա ես: Դու դեռ կարող ես հարություն առնել: Նայիր կրկին իրերին այնպես, ինչպես նայել ես ինչ-որ ժամանակ՝ հենց դա է հարությունը:

3. Ունայն հոգսերը արտաքին փայլի մասին, բեմական ներկայացումները, մանր և խոշոր եղջերավոր անասունների հոտերի ձեռքբերումը, գլադիատորական մարտերը, շան լակոտների զգվռոցը նետված ոսկորի համար, մրջյունների քրտնաջան աշխատանքը, վախեցած մկների վազվզոցը, թելերից կախված տիկնիկների շարժումները. այս բոլոր երևույթները մի կարգի են: Այս բոլորի միջավայրում հարկ է պահպանել բարյացակամությունն առանց անձնապաստանության, բայց տեսադաշտից բաց չթողնել, որ յուրաքանչյուր մարդու արժեքը որոշվում է նրա ձգտումների առարկաների արժեքով:

4. Ցանկացած խոսքի ընթացքում հարկ է ուշադրություն դարձնել այն բանին, թե ինչ է ասվում, յուրաքանչյուր ձգտման դեպքում՝ այն բանին, թե դրանից ինչ է ստացվում: Առաջին դեպքում պետք է հետևել իմաստին, երկրորդում՝ ամեն ինչից առաջ դիտարկել հետապնդվող նպատակը:

5. Կբավարարե՞ն արդյոք իմ հոգեկան ուժերն այդ գործի համար, թե՞ ոչ: Եթե կբավարարեն, ապա ես կօգտվեմ դրանցից որպես գործիքից, որն ինձ տրված է Ամբողջի էությամբ: Իսկ եթե չեն բավարարի, ապա այդ գործը կզիջեմ նրան, ով կարող է այն ավելի լավ կատարել, եթե միայն այն իմ պարտականությունը չէ, կամ կանեմ իմ ունակության սահմաններում՝ օգնության կանչելով նրան, ով օգտագործելով նաև իմ բանականությունը, համընդհանուր բարիքի համար կիրագործի տվյալ պահին պահանջվողը: Քանզի, կատարում եմ ինչ-որ բան իմ ուժերով, թե ուրիշի օգնությամբ, պետք է ձգտել միայն այն բանին, ինչ պահանջվում է ընդհանուրի բարիքով և ներդաշնակ է նրան:

6. Ինչ-որ ժամանակ փառաբանված ինչքա՞ն մարդիկ են այժմ մոռացության մատնված: Իսկ նրանց փառաբանող քանի՞սն է վաղուց արդեն գերեզմանում:

7. Մի՛ ամաչիր ուրիշների օգնությանը դիմելուց: Քեզ, ինչպես պարիսպները գրոհող ռազմիկին, վիճակված է լուծելու խնդիրդ: Ի՞նչ անես, եթե կաղալու պատճառով մենակ չես կարող պարսպի վրա բարձրանալ, իսկ ուրիշների օգնությամբ դա քեզ կարող էր հաջողվել:

9. Թող քեզ չանհանգստացնի ապագան: Չէ՞ որ դու կհասնես նրան, եթե պետք լինի՝ ունենալով նույն բանականությունը, ինչից որ օգտվում ես ներկայում:

10. Ամեն ինչ միահյուսված է միմյանց, ամենուր աստվածային կապն է, և դժվար թե լինի մնացյալին օտար ինչ-որ բան, քանզի ողջը միավորված է ընդհանուր կարգով ու որպես զարդարանք ծառայում է միևնույն աշխարհին: Չէ՞ որ ամեն ինչից կազմվում է միասնական աշխարհը, ամենուր ներթափանցում է միակ աստվածը, միասնական է ամեն ինչի էությունը, համընդհանուր է օրենքը, միասնական է նաև բանականությունը բոլոր բանական արարածներում, միակն է ճշմարտությունը, եթե միայն միասնական են արժանիքները նույն տեսակի ու նույն բանականությանը հաղորդակից բոլոր արարածների:

11. Ողջ նյութականը արագորեն անհետանում է համաշխարհային էությունում, յուրաքանչյուր պատճառային սկիզբ արագորեն կլանվում է համաշխարհային բանականության կողմից: Եվ հիշողությունն ամեն ինչի մասին ոչ պակաս արագությամբ իր գերեզմանն է գտնում հավերժության գրկում:

12. Բանական արարածի համար միևնույն գործողությունը ներդաշնակ է և՛ բնույթի, և՛ բանականության հետ:

13. Պետք է արդար լինել, այլ ոչ թե արդարացող:

14. Ինչպիսին կատարյալ և միասնական մարմնի անդամների միջև հարաբերությունն է, այնպիսին է տարածությամբ բաժանված բանական արարածների միջև հարաբերությունը. արարածներ, որոնք ստեղծված են միասնական գործի մասնակցելու համար: Այդ միտքն ավելի խորը կարմատավորվի մեջդ, եթե հաճախակի ինքդ քեզ ասես, որ դու բանական արարածներից բաղկացած Ամբողջի մասն ես: Իսկ եթե դու անվանես ինքդ քեզ առանձին մաս, ապա չես սիրի մարդկանց ամբողջ սրտով, և ուրիշների բարօրությանն ուղղված գործունեությունը քեզ լիարժեք բավարարվածություն չի պարգևի: Այդ գործունեությունը դու կհամարես լոկ քո պարտքը, այլ ոչ թե սեփական բարօրությունը:

16. Ով էլ ինչ անի կամ ասի, ես պետք է լավ մարդ մնամ: Այդպես ոսկին, զմրուխտը կամ ծիրանին կարող էին ասել. «Ով ինչ էլ անի կամ ասի, ես պետք է զմրուխտ մնամ և պահպանեմ իմ գույնը»:

17. Մարմինը թող ինքը հոգ տանի, որ փորձանքի չգա, և կարող է տեղյակ պահել, եթե այդպիսի բան պատահի: Իսկ հոգին, որն ընդունակ է վախենալու ու վշտանալու իր ներշնչող երևակայության շնորհիվ, հանգստություն կպահպանի, եթե ստիպես նրան մի կողմ նետել նման երևակայությունը:.....

18. Երանություն վայելել նշանակում է բարի հանձարի տեր լինել և բարօրությամբ լի գերիշխող ակունք ունենալ: Ի՞նչ ես անում այստեղ, երևակայություն: Ի սեր աստվածների, հեռացի՛ր այնպես, ինչպես եկել ես, ինձ պետք չես: Հայտնվել ես արմատացած սովորույթի ուժով: Ես չեմ զայրանում քեզ վրա, միայն հեռացիր:

19. Ինչ-մեկը փոփոխությունների՞ց է վախենում: Բայց ի՞նչ կարող է առաջանալ առանց փոփոխությունների: Ի՞նչն է ավելի բնութագրական Ամբողջի էությանը: Կարո՞ղ էիր

օգտվել բաղնիքից, եթե ծառն այրվելով չփոփոխվեր: Կարո՞ղ էիր սնվել, եթե սնունդը փոփոխվելու հնարավորություն չունենար: Իսկ այլ օգտակար բան կարո՞ղ էր արդյոք տեղի ունենալ առանց փոփոխության: Մի՞թե չես տեսնում, որ քո փոփոխությունները լիովին նման են հիշատակվածներին, և դրանք հավասարապես անհրաժեշտ են Ամբողջի բնույթի համար:

20. Բոլոր մարմինները սլանում են համաշխարհային մատերիայում, ինչպես սրընթաց հոսանքում. նրանք սերտորեն կապված են Ամբողջի հետ՝ միասնաբար գործելով նրա հետ, միմյանց հետ համապատասխանությամբ նման են մեր անդամներին: Ինչքան Քրիստոսներ [1]¹, Սուկրատեսներ, Էպիկտետներ² է կլանել արդեն հավերժությունը: Թող այդ միտքը ծնվի քո գլխում յուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուր իրի առիթով:

21. Ինձ միայն մի բան է հուզում. հանկարծ մարդու էությանը հակառակ բան չանեմ, չգործեմ նրան անհամապատասխան ձևով, տվյալ պահին նրան չհակասեմ:

22. Շուտով դու ամեն ինչ կմոռանաս, և ամենն իր հերթին կմոռանա քեզ:

23. Մարդուն հատուկ է սիրել նաև մոլորյալներին: Դու կհանգես դրան, եթե համակվես այն մտքով, որ նրանք հարազատ են քեզ, և մեղանչում են անգիտությամբ ու իրենց կամքին հակառակ: Եվս մի փոքր. և քեզ էլ, նրանց էլ վրա կհասնի մահը: Ոչ ոք նրանցից (ամենագլխավորը դա է) քեզ վնաս չի պատճառել, քանզի չի դարձրել հոգիդ ավելի վատ, քան այն մինչ այդ էր:

25. Ջայրույթից աղավաղված դեմքը սարսափելի է և հակաբնական: Եթե այդպիսի արտահայտությունը հաճախ է լինում, այն կարծես թե ճնշում է մարդկային կերպարանքը, մարում է այն այնպես, որ ոչ մի կերպ հնարավոր չէ վերականգնել: Այստեղից կարելի է հասկանալ, որ զայրույթը հակասում է բանականությանը: Եթե մենք զրկվենք մոլորությունների գիտակցումից, ապա էլ ինչի՞ համար ապրենք:

26. Ամբողջատեր բնությունը շուտով կփոխի այն ամենը, ինչ տեսնում ես, և նրա էությունից կստեղծի մի այլ բան, իսկ հետո ևս ինչ-որ նոր բան, որպեսզի հավերժ պատանի մնա աշխարհը:

27. Եթե որևէ մեկը հանդես է եկել քո դեմ, վաղվաղակի հաշիվ տուր քեզ, թե բարու և չարի ինչպիսի պատկերացումների գործադրմամբ է դա արել: Պարզելով այդ՝ դու չես խղճա նրան և ո՛չ կզարմանաս, ո՛չ էլ կզայրանաս: Եթե բարու մասին ձեր հայացքները համընկնում են, դու պետք է ներես նրան, իսկ եթե չեն համընկնում, ապա ավելի հեշտ է պահպանել բարյացակամությունը նրա նկատմամբ, ով անկեղծորեն սխալվում է:

28. Այն բանի մասին, ինչ չունես, մի՛ մտածիր որպես քեզ պատկանողի: Քեզ պատկանող ամենաարժեքավոր իրն ընտրիր և պատկերացրո՛ւ, թե ինչքան ջանք

¹ Մ.թ.ա. 3 -րդ դարի հույն իմաստասեր, ուներ հետաքրքրությունների ապշեցուցիչ բազմազանություն և անօրինակ աշխատասիրություն (ծանոթությունը՝ թարգմանչի):

² Մ.թ. առաջին դարի հույն իմաստասեր, ազատ արձակված ստրուկ էր և իմաստասիրական դպրոցի հիմնադիր, նրա պարադոքսային մտքերից . «Եթե ցանկանում ես լինել բարի, ամենից առաջ քեզ չար համարիր» (ծանոթությունը՝ թարգմանչի):

պետք է թափեիր այն ձեռք բերելու համար, եթե չունենայիր: Բայց զգուշացիր, որ կենտրոնացնելով ուշադրությունդ դրա վրա՝ չգերազնահատես նշանակությունը և չկորցնես հոգուդ հանգստությունը հնարավոր կորստի դեպքում:

29. Կենտրոնացի՛ր քեզ վրա: Բանական և առաջնորդող ակունքն էությամբ այնպիսին է, որ բավարարվում է իրենով՝ արդարամիտ գործունեությամբ և նրանից բխող խաղաղությամբ:

30. Արմատախի՛լ արա ցնորքը: Կե՛րջ դիր տենչերին: Ղուրս մի՛ եկ ներկայի սահմաններից: Ծանի՛ր ինչպես քեզ, այնպես էլ ուրիշների հետ տեղի ունեցողը: Ղասավորի և բաժանի՛ր բոլոր առարկաները պատճառական և նյութական ծագման հիմունքներով: Մտածի՛ր վերջին ժամի մասին: Թող, որ օտարի մոլորությունները մնան այնտեղ, որտեղ և էին:

31. Զգտիր մտքով ներթափանցել խոսքի իմաստի մեջ: Եվ թող քո միտքը խորանա առաջացողի և գործողի մեջ:

32. Պարզությունը, համեստությունը և անտարբերությունն այն ամենի նկատմամբ, ինչ գտնվում է առաքինության և մեղքի միջև, թող զարդարի քեզ: Սիրի՛ր մարդկային ցեղը: Հնազանդվի՛ր Աստծուն:.....

38. Պատվագրություն է, եթե դեմքը հոգու թելադրանքին հլու՝ ընդունում է նրան նպատակահարմար տեսք և արտահայտություն, իսկ ինքը՝ հոգին, իրեն պատշաճ տեսք և արտահայտություն տալու ուժ չի գտնում իր մեջ:

44. Թող քեզ չզրավեն ուրիշի ո՛չ հուսաբեկությունը, ո՛չ հրճվանքը:

45. Պլատոնի խոսքը. «Դրան ես հակադարձում եմ արդարացի առարկությամբ՝ լավ չես դատում, սիրելի բարեկամ, եթե կարծում ես, որ քիչ թե շատ գործիմաց մարդը պետք է հաշվի առնի ողջ մնալու կամ մեռնելու հնարավորությունը, այլ ոչ թե իր գործելիս ուշադրություն դարձնի միայն այն բանին՝ արդարացի թե անարդարացի է գործում, և գործն արժանի է արդյոք լավ թե վատ մարդու»:

47. Չէ՞ որ իսկական այրը պետք է ցանկանա ոչ թե այն, որ ապրի այսքան ու այսքան ժամանակ, և չպետք է կառչի կյանքից, այլ հույս դնելով Աստծու վրա և հավատալով կանանց, որ ճակատագրից չես փախչի, պետք է մտորի միայն այն մասին, թե ինչ կերպ հնարավորինս ավելի լավ ապրի իրեն վիճակված ժամանակը:

48. Դիտի՛ր լուսատուների շարժումը՝ որպես դրան մասնակից, և մշտապես մտորի՛ր տարրերի մեկմեկու փոխարկվելու մասին: Քանզի նման պատկերացումները մաքրում են երկրային կյանքի կեղտից:

49. Հիանալի են Պլատոնի խոսքերը. «Ով իր ճառերի առարկա է դարձնում մարդուն, նա կարծես թե լեռան գագաթից պիտի դիտի ողջ երկրայինը՝ խառնաժողովները, արշավները, դաշտային աշխատանքները, ամուսնությունները, անուսնալուծությունները, ծնունդները, մահերը, աղմկոտ դատավարությունները, անապատները, բարբարոսների տարբեր ցեղերը, տոնակատարությունները, թաղումները, տոնավաճառները, տարասեռների միախառնումը և հակադրությունների

գումարը»:

50. Հայա՛ցք ձգիր անցյալին՝ ինչքա՛ն հեղաշրջումներ են արդեն վերապրել պետությունները: Կարելի է կանխատեսել և ապագան: Չէ՞ որ կլինի կատարելապես այն նույն տեսակի և դուրս չի գա այժմ տեղի ունեցողի ռիթմից: Այս իսկ պատճառով էլ միևնույնն է՝ կդիտարկես քառասուն տարվա կամ տասը հազար տարվա մարդկային կյանքը: Քանզի ի՞նչ նոր բան կտեսնես:

53. Կան մարդիկ, ովքեր գերազանցում են քեզ պայքարի արվեստում: Բայց թող ոչ ոք չգերազանցի քեզ ընդհանուրի բարօրությանը նվիրվածության մեջ, համեստության, ողջ տեղի ունեցողին հնազանդության, մերձավորների մոլորությունների նկատմամբ ներողամտության մեջ:

54. Որտեղ հնարավորություն կա գործելու աստվածների և մարդկանց համար ընդհանուր բանականությանը համապատասխան, այնտեղ ոչ մի սարսափելի բան չկա: Քանզի, որտեղ հնարավոր է օգուտ ստանալ ճշտորեն ուղղորդված և գործունեության մեր համակարգին համապատասխանող ճանապարհով, այնտեղ հարկ չկա երկյուղ կրել որևէ վնասից:

55. Ամենուր ու միշտ քո իշխանության ենթակա են և՛ բարեպաշտորեն բավարարվելը սեփական առկա վիճակով, և՛ արդարորեն վերաբերվելը քեզ շրջապատող մարդկանց, և՛ ուշադիր հետազոտելը մերօրյա պատկերացումները, որպեսզի ոչինչ անհարիր նրանց մեջ չներթափանցի:

56. Մի՛ անդրադարձիր ուրիշ մարդկանց գերիշխող սկզբունքին, այլ հայացքդ ուղղի՛ր այնտեղ, ուր տանում է քեզ բնույթդ՝ Ամբողջի էությունը, նրանով, ինչ կպատահի քեզ հետ, և քո բնույթը նրանով, ինչ պատշաճ է, որ անես: Յուրաքանչյուր էակի հարկ է անել այն, ինչ համապատասխանում է իր էությանը: Բայց բոլոր ոչ բանական էակները, համաձայն իրենց կառույցի, կանխորոշված են բանական արարածների համար (ինչպես և ամենուրեք քիչ կատարյալներն ավելի կատարյալների համար), իսկ բանականները՝ միմյանց համար: Այդ իսկ պատճառով մարդու էության մեջ առաջին տեղը գրավում է նրա հասարակականությունը: Երկրորդ տեղը՝ անհողողությունն այն վիճակների նկատմամբ, որոնք մարմնական են, քանզի բանական և հոգևոր շարժմանը հատուկ է սահմանազատվել ու երբեք անձնատուր չլինել զգացողությունների և ձգտումների շարժմանը: Վերջիններս ըստ էության կենդանական են, իսկ հոգևորը ցանկանում է առաջնություն ունենալ և չհաղթահարվել նրանցից, ինչն արդարացի է, քանի որ ըստ բնույթի պետք է օգտվի նրանցից: Երրորդ տեղը՝ բանական արարածի պարսավելը չմտածվածությունից ու կեղծիքից....

60. Նայիր ներսդ: Ներսումդ բարու աղբյուրն է, որը երբեք չի սպառվի, եթե դու չդադարես փորելուց:

61. Մարմինն էլ պետք է ունենա հայտնի կեցվածք, չլինի վետվետուն ո՛չ շարժման ժամանակ, ո՛չ ժեստերում: Չէ՞ որ հոգին արտահայտվում է դեմքի վրա՝ հաղորդելով նրան խելացիություն և բարեկերպություն. նույն բանը կարելի է պահանջել նաև ողջ մարմնից: Բայց այդ բոլորը հարկ է կենսագործել՝ պահպանելով բնականությունը:

62. Կյանքի արվեստն ավելի շուտ հիշեցնում է ըմբշամարտի արվեստը, քան պարի: Նա

պահանջում է պատրաստակամություն և տոկունություն՝ անսպասելիի ու չնախատեսվածի նկատմամբ:

63. Մշտապես մտածի՛ր այն մասին, թե ինչպիսին են այն մարդիկ, որոնց գնահատմանն ես ձգտում, և ինչպիսին է նրանց առաջնորդող սկզբունքը: Եվ դու ո՛չ կմեղադրես նրանց իրենց ականա մեղանչումների համար, ո՛չ էլ կզգաս նրանց գնահատման կարիքը, եթե տեսնես նրանց համոզմունքների ու ձգտումների ակունքը:

65. Յուրաքանչյուր տառապանք կրելիս անմիջապես հիշի՛ր այն մասին, որ այն անոթալի չէ և ամեն ինչ առաջնորդող հոգին ավելի վատը չի դարձնում, քանզի կորստաբեր չէ ո՛չ նրա խելացիության, ո՛չ էլ հասարակակայնության համար: Տառապանքների մեծամասնության դեպքում կարող ես օգնության կանչել էպիկուրի խոսքերը. «Այս տառապանքը անտանելի չէ և ոչ էլ հավերժ է, եթե միայն դու հիշես նրա սահմանների մասին և ոչինչ չմոգոնես քեզնից»: Հիշի՛ր նաև, որ մեզ համար տանջալից բաներից շատերը նույնական են տառապանքներին, չնայած մենք չենք նկատում դրանք, ինչպես օրինակ, քնատությունը, տոթը, տաղտկությունը: Ուստի, եթե դու ճնշվում ես ինչ-որ նման բանից, ասա ինքդ քեզ. «Ես չհաղթահարեցի տառապանքը»:

66. Ջանա նույնիսկ ստորադաս արարածների նկատմամբ չապրել այն զգացմունքները, որ մարդիկ զգում են միմյանց նկատմամբ:

68. Բնությունն այնքան էլ սերտ չի կապել քեզ մարմնի հետ, որ չկարողանաս ստիպել նրան իմանալ իր տեղը և ղեկավարվել բանականությամբ: Չէ՞ որ միանգամայն հնարավոր է դառնալ աստվածակերպ մարդ, մնալով ոչ մեկին հայտնի: Միշտ հիշիր այդ մասին, նաև այն, որ երանելի կյանքը շատ բան չի պահանջում: Եվ, եթե դու կորցրել ես դիալեկտիկ կամ ֆիզիկոս դառնալու հույսդ, ապա չպետք է թողնես հոգսդ առ այն, որ լինես ազատ, նվիրված համընդհանուր բարօրությանը և հնազանդ Աստծուն:

69. Ապրիր անտրտունջ՝ ոչնչով չմթազնված բարեհոգության մեջ, եթե նույնիսկ բոլոր մարդիկ վրադ բազմապիսի նախատինքներ են տեղում, իսկ վայրի գազանները ծվատում են քո մարմնական ծածկոցի անուժ անդամները: Ի՞նչը, իրոք, կարող է խանգարել հոգուն պահպանել, չնայած այդ ամենին, իր ներքին աշխարհը, ճշմարիտ դատողությունը ողջ շրջապատողի մասին և պատրաստակամությունը՝ օգտագործելու իրեն բաժին հասածը...

70. Բնավորության կատարելության արտահայտությունն այն է, որ յուրաքանչյուր օր ապրի, ինչպես վերջինը կյանքում, օտար լինի ունայնությանը, անգործությանը, երեսպաշտությանը:

71. Անմահ աստվածները չեն սրտմտում այն բանից, որ այսքան երկար ժամանակի ընթացքում հարկադրված են գործ ունենալ այսչափ տխմարավուն արարածների այսպիսի բազմության հետ, ընդհակառակը՝ նրանք ամեն կերպ հոգում են այդ էակների մասին: Քո վերջն արդեն մոտ է, իսկ դու կորցնում ես համբերությունդ՝ ընդ որում ինքդ լինելով այդ արարածներից մեկը:

72. Ծիծաղելի է, ձգտելով խուսափել ուրիշի մեղսականությունից, ինչն անհնար է, չջանալ խուսափել սեփականից, ինչը լիովին հնարավոր է:

73. Ինչը բանական և քաղաքացիական ունակությունը համարում է ոչ բանական և հասարակականին հակառակ, այն հիմնավորապես համարում է իր արժանապատվությունից ցածր:

74. Եթե դու բարություն ես արել, իսկ ուրիշը բարություն է զգացել, ապա ինչո՞ւ ես դու, նմանվելով անմիտ մարդկանց, ձգտում ինչ-որ երրորդ բանի, ինչպես օրինակ՝ բարի մարդու փառքի կամ պարգևի:

75. Ոչ ոք չի հոգնում օգուտ ստանալուց: Օգուտն էլ կապակցված է էությանն համապատասխան գործողության հետ: Մի՛ հոգնիր օգուտ ստանալուց՝ օգուտ բերելով: